

16095

... of De la Fr an ce



19d April 18

ՏԵՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ


ՏԵՂԱՔԻՑԻ

ՃԱՐ ՑԱՀԱԳՍ ՀՆՈՅՆ
ԵՐՈՒՍԵԼԻՄ
ԵՒ ՏԱԶԱՐԻՆ ՍՈՅՈՄՈՆԻ

— զանազան —

ԹԵՂԴՄԵՆԵՑԻ

Ի ԳԱՀԱՏԱԿԱՆԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ
ՑՈՎՀԱՆՆՈՒ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
ՊՐՈՒՍԱՑԻՈՑ



ԵՐՈՒՍԵԼԻՄ

— Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՑ ՅԱԿՈՎԵԱՆՑ

1855

10-ինքնական

յօնակ Արքացիութեան

Առաջնական պատճեան

գայլութիւն առաջանակ

11-ինքնական

առաջնական պատճեան

ՅԵՐԵՎԱՆԻ ԱՐԴՅՈՒՆ

Յաւագ-Մ գրից հնոյն Երուսաղեմի և Սովորմանեան տաճարին համեմատութեամբ այժմու Մէհրաթուլլահին՝ բաղսւմ՝ խնդիրը յածեալ առգիտակս տեղեացն , 'ի լուծումն ամենայնի պատշաճ դատեցի Թարգմանել զայս ձառ պատուական , դըժուարագիւա և 'ի բնիկ լեզուին :

ՅԵՒԱԶԱԲԱՆ

ՀԵՂԻՆԱԿԻՆ

Քառաքա անուանիք 'ի վեպս
պատմութեանց մասնաւոր խուզար-
կութեանց կարօտին 'ի մանրապատում
տեղեկութիւն . և ոչ ոք հակառակեա-
ցէ մեզ՝ զի Երուսաղէմ մի 'ի խու-
զարկելեաց անտիքաղաքացնէ : Ա ասն
այսորիկ բազում արք իմաստունք աշ-
խատ եղեն ճառել զսմանէ լիով ման-
րապատում զամենայն հանգամանա-
ցըն , 'ի խնդիր լինելով այլ և այլ փո-
ղոցաց քաղաքին և հաստրակաց շի-

նուածոյն և զրանց , և առհասարակ
գողցես ամենայն տեղեաց զօրոց յի-
շատակը ինչ գտանին ՚ի սուրբ Գիրս
կամ ՚ի հնապատում մատեանս : Եւ
թէ և չյաջազէր խուզողութիւն ա-
րանցդ իմաստնոց , ոչ ինչ նուազ վար-
ձուց և առ ՚ի մէնջ շնորհակալեաց ար-
ժանիք գտանեսցին յազագս բարենա-
խանձ վաստակոցն :

Յայս գրութիւն դիսու մն մեր է
որոշակի ցուցանել զտարածութիւն
քաղաքին՝ յորոյ վերոյ ցոյժմ չկը ինչ
ասացեալ ստոցդ , և ընդհանրապէս ա-
ռաւելքան զՃշմարիտ չափն ցուցանիւ
Պէտք էին պիտոյից տեղեացն որոշել
զայդ . և զի անհոգացան զայդմանէ ,
մնաց մեզ բազում ինչ քննելի : Եւթէ
գժուարին յոյժ իցէ , զի մի ասացից
բնաւ իսկ անհնարին , բացատրել բա-
զումինչ որ անկն են ՚ի մանրապատում
տեղեկութիւն քաղաքիդ . և այնպիսի

իմն եղանակաւ՝ որ զմիսս ընթերցու-
զացն հաճեցուսցէ, մեր տուարկոյ բռ
նիցս՝ ի կարգէ տատի տրտաքս փակի,
և համարիմք զսա ընդունակ հզօր և
քաջայայտ ապացուցութեան :

Եւ զի կարող լիցուք ճառել զայս-
մանէ ճշգրտապէս, պէտք են նախ գի-
տել թէ յորսց շինուածոց բաղկանոցը
հինն Երուսաղէմ : Այսքան քննու-
թիւն բարձցէ զամենայն Երկթայու-
թիւն յօրոշումն նորոյս Երուսաղէմի
՚ի հնոյն : Ըրջապատ հնոյն բարւոք
ճշգրտեալ է այնու զի բնական դիրք
տեղեացն ոչ ներէ ստորագրովին հե-
ռանալ ՚ի ճշմարտէն : Այսն այսորիկ
և մեք նշանագրեմք մեծաւ հաւա-
տարմութեամք զայժմու դիրս Երու-
սաղէմի, զոր հաւանելի է ասել թէ
դժագրեաց Գաղղիացին Տէղհէյ . և
տպեցաւ ՚ի պատմութեան ճանապար-
հորդութեան նորա՝ զոր գնաց յարե-

ւելս ՚ի 1621, յազագս գործոց ինչ
 յանձն եղելոց նմա ՚ի Լուդովիկոսէ
 Երեքտասահներորդէ՝ առ ՚ի կատարե-
 լոյ ընդ արքայն Օսմանեանց։ Ո՞ի ՚ի
 յօդուածոց հրեշտակութեանդ առ-
 նըդ էր, զի մնացեն լատին կրօնա-
 ւորք ՚ի պահպանութիւն սրբոց Տե-
 ղեացն Պաղեստինու, և նստցի ոս-
 տիկան գաղղիացի յԵրուսաղէմ, ուս-
 տի չեն ինչ զարմանք, զի այս ստորա-
 գրութիւն յայս գիրս միայն գտանի
 և ոչ յայլս։ Արդի շրջապատ քաղա-
 քին, փողոցք նորա և տեղագրու-
 թիւն երկրին մանրամասին գրին յայ-
 րմ ստորագրութեան լաւ ևս քան
 յայլ տեղիս՝ որչափ եսս գիտեմ։ Ո՞ե
 առ անխառն յաւելսրդաց ունելոյ ըդ-
 մեր զայս Ճառ, և զի մի շատ յառա-
 ջադիր նպատակէ անտի մերմէ խոսո-
 րեսցուք, առնումք ՚ի գրոց անտի մի-
 այն որչափ ինչ պէտք են ՚ի նիւթ ճա-

ոխ գլխաւորապէս : Եւ յայսպիսիս
օգուտա և հարկաւորութիւն այսպի-
սւոյ սատրագրութեան պատճառս
տան զարմացման՝ թէ զիա՞րդ ոչ ոք
մինչև ցայսօր էած զմուտ վարիլ ՚ի
խուզարկութիւն իրացս բանիւք Ճառ-
նապարհորդին՝ զորս մեք ՚ի կիր ար-
կանեմք :



ՊԼՈՒԽ Ա.

Բան և ինտեր յաղագս դեղէաց հնոյն
Երւասղէմ :

ՊՆԴՀԱՆՈՒՄ ինչ գաղափար ասց
մեզ Յովսեպոս զԵրուսաղէմոյ՝ յասե-
լըն, (Յաշ պատերազմաց Հրէից Զ. 6.) թէ
ունէր քաղաքս զդիրան ՚ի վերայ եր-
կուց բլրոց միմեանց դէմ յանդիման.
և բաժանէին ՚ի միմեանց ունելով ձոր
մի անջրապետ : Եասն որ ՚ի վերայ բար-
ձրագոյն և ընդարձակագոյն բլրին՝ ա-
նուանէր Վերնաքաղաք . և զոյս մասն
ընտրեաց Դառւիթ յաղագս դրիցն ՚ի
շնուել զամբոցն : Իսկ միւս բլուրն ա-
նուանեալ Աքրա կամսար՝ էր աեղի
Ստորին քաղաքին : Արդ տեսանեմք և
մեք, զի լեառն Սիոն՝ որ է առաջինն
՚ի յիշատակելոց բլրոցդ , յայտնապէս

տեսանի՝ ՚ի յատակադիծ պատկեր քա-
 զաքին, առաւել վերամբարձ զառ ՚ի
 վերն հայի յարեւմուտս և ՚ի հարաւ .
 և է անդ խորին վախը և գահավէմ ,
 զոր սուրբ Գիրք յԵթրայական բնա-
 գրին անուանեն Ֆէպէն Հիննոն, այն է
 ձոր որդւոցն Ենանայ : Այս ձոր ու-
 նելով զընթացսն յարեւմոից յարեւ-
 լըս՝ ՚ի ծայր լերինն Սիսնի միանայ ընդ
 հեղեղատին կեդրոնի, որ ձգի ՚ի հիւ-
 սիսոյ ՚ի հարաւ : Այս պարագայք
 տեղականիք՝ զորս նոյն իսկ բնութիւնն
 որոշեալ է, անփոփոխելիք են յարկա-
 ծից ժամանակին և ՚ի բռնութենէ
 մարդկան, ընդ որովք անկաւ Երու-
 սաղէմ : Եւ սովաւ ստուգիւ ծանեաք
 զտեղի այնր մասին քաղաքին՝ զոր գր-
 աւէ Սիսն : Այս կողմն ձգի յաւէտ
 ՚ի հարաւ կոյս . և այնպէս հաստատ-
 եալ են սահմանիք յայսմ կողմանէ՝ զի
 չէ մարթ Երկարել և ես յոր կողմանէ
 և իցէ . սովաւ սահմանի Երուսաղէմ
 և ըստ լայնութեանն, ՚ի միոջէ կող-
 մանէ զառ ՚ի վայրիւն Սիսնի որ հայի

ընդ արեմուտս, և 'ի միւտմէն միւ-
տով կողմամբն յորում է հեղեղատն
կեղրոնի յարեելս : Իսկ որ 'ի Յովսե-
պոսէ հին պարիսպ Երուսաղէմի ան-
ուանի, շինուած համարեալ Դութի
և Սովոմօնի, սահմանէր զծագ ապա-
ռաժուտ բլոյն, որպէս նոյն պատմա-
գիր ասյ մեզ գիտել: Յայս բերի և
բան Տակիտոսի . (Պատմ. Ե. 11.) և այ-
սու երեխ թէ և շրջապատ լերինդ
ցուցանէ զսահման քաղաքին և բզ-
շրջապատ նորա :

Երկրորդ բլուրն ամբառնայր 'ի
հիւսիսոյ Սիսնի, զգէմսն յարեելց
կողմանէն ունելով գէպ 'ի լետոն Մո-
րիա՝ յորոյ վերայ կանգնեալ էր տու-
ձարն . և խորիսորատմի բաժաննէր զայս
բլուր 'ի Սիսնէ . և զայս խորիսորատ
մասամբ ինչ լցին Ասմանէ ացիք, քե-
րելով զգագաթն Աքրա բլոյն, որ-
պէս ուսուցանէ մեզ Յովսեպոս 'ի վե-
րայ յիշեալ տեղւոջն : Օ ի այս գա-
գաթն հայէր 'ի վերայ տաճարին . և
մօս էր նմա յոյժ ըստ բանից նորուն

Յովսեպոսի : Ա ասն այսորիկ և Անտիոք
 քոս Երեւելին կառոց անդ գղեակ ,
 զի նուածել կարասցէ զԵրուսաղէմ ,
 և խռովեսցէ զտաճարն : Եւ պահա-
 կերաց ամրոցիս ազգաւ 'ի Յունաց
 անտի լեալք կամ 'ի Մակեդոնացւոց՝
 կացին հակառակ Հրէից մինչեւ 'ի ժա-
 մանակս Սիմոնի , որ կործանեաց ըշ-
 գղեակն և հարթեաց զբլուրն : Եւ
 զի յայսմհետէ ոչ ևս յիշի ուրեք Աք-
 րա , հաւանելի է լինել այդմ ոչ յա-
 տուկ անուն րլրոյն , այլ հասարակ
 անուն 'ի յունականէն Աքրա՝ որ նը-
 շանակէ տեղի բարձր : Եւ առեալ
 լինի Երբեմն 'ի ցուցանել ամրոց կամ
 գղեակ . որպէս և 'ի լուսին լեզուին
 Ուօտա նշանակէ վէմ և ամրոց : Եւ յլ և
 բառն Հաքրա՝ և սկզբնատարիւ՝ կար-
 ծի բառ Ասորւոց , կամ 'ի նոցա լե-
 զուին ընկալեալ յացլմէ բարբառոց 'ի
 նշանակէլ տեղի ամրացեալ , կամ ա-
 կառ : Եւ անուանեալն 'ի քաղղէտ-
 կան մեկնաբանութեան սուրբ Գրոց՝
 Հաքռա ձիուն , է ամրոցն կամ գղեակն

Սիսնի : Ծովսեպոս ստորագրէ մեղ
զդիրս Աքրած բլոցն բառիւն՝ Ամֆի-
ժիշտօս , որ յատկապէս նշանակէ ըզ-
դէմս լուսնի՝ յորժամ է տասնօրեայ
կամ մետասանօրեայ , և ութուտասն
կամ իննտասնօրեայ . և Մարդինիոս
Քաբէլս մեկնէ , իբրև զմիջոցն որ
ընդ լիալուսին և ընդ կիսալուսին :
Եւ ՚ի ստորագրութեան անդ զոր յա-
ռաջնորդ մեղ ունիմք , մի յերեւելի
հանգամանոց է հետք գլխաւոր բարձ-
րաւանդակին Աքրայի ընդ մէջ լերինն
Սիսնի և տաճարին . և այնպէս աներե-
բայելի է այս ստորագրութիւն , զի
և ՚ի գծագրութեան անդ պատկե-
րին յարե մտեան հարաւային անկիւն
տաճարին նշանակեալ է զրով , Տե-
չ բարձր :

| Եառն Մօրիա՝ զոր գրաւէր ող-
ջոյն տաճարն , յառաջնմէ էր բլուր
ինչ անհարթ . և առ ՚ի պարունակել
անգանօր զշինուածո կարեսրա տու-
ճարին , և յաւելուլ զհարթավայր
գագաթանն , ամրացուցանել պէտք

էին զկողսն և ձեացուցանել քառա
 կուսի . և առ այս մեծամեծ և բազ
 մածախ շինուածոց հարկ էր : Արեւե
 լեան կողմն սահմաննեալ եղերէր ըգ
 հեղեղասն կեդրոնի , որ հաստրակօ-
 րէն անուանէր ձոր Յովսափաթու ,
 և էր խոր յոյժ : Հարաւակողմն կա-
 ռուցեալ 'ի ցածուն գետնի՝ 'ի ստորէ
 մինչեւ 'ի վեր լցեալ էր քարիւ և կրիւ
 ըստ ճարտարութեան որմագրաց . և
 Յովսեպս զայս կողմն տաճարին բար-
 ձրացեալ ասէ յերկրէ կանգունս ոչ
 ինչ նուազ քան զերեք հարիւր : Օի
 և 'ի հաղորդել զայս տեղի ընդ Սիսնի՝
 կամրջի իմն պէտք էին , որպէս նոյն
 պատմագիս ասէ : Արեւմտեան կողմն
 հայէր յԱքրա . և Յովսեպս զտեսիւ
 տաճարին յայնմ կողմանէ նմանեցու-
 ցանէ թէատրոնի : Ե հիւսիսոյ խոր-
 խորաստ փորեալ , կամ որպէս նոյն
 պատմիս ասէ հելլեն լեզուաւ , Դաֆ-
 բոս պէ օրո՛րիչտա , անջրապետէր զտաճա-
 րըն յայըմէ բլրոյ՝ որ կոչէր Պեղէթա .
 և այս բլրոյ յետոյ մասն եղեւ քաղա-

քին , ընդարձակելով զւթապատն :
Եյս են ընդհանուր դիբք լերինն Մօ-
րիոց ՚ի տեղւոջ անդ զոր ունի Ե-
րաւառաղէմ :

Ենուանի աշտարակն Անտոնեան
էր ՚ի հիւսիսային արե մտեան անկեան
տաճարին ՚ի վերաց վիսմի : Օստ կո-
ռաց նախ Հիւրկանոս տուաջին՝ և ա-
նուանեաց Վասոփիս , զոր բառ յունա-
րէն ասէ Յովսեպոս . այլ Երսնիմոս
վկոյէ թէ յաճախ էր բառդ ՚ի գոր-
ծածութեան ՚ի Պաղեստին մինչեւ ցու-
ւուրս իւր , և նշանակէր տուն ամրա-
կառաց շինեալ իբրև զդղետի : Օսյա
շինութիւն զարգարեաց Հերովդէս ,
և ետ նմա զանուն Անտոնինոսի բա-
րերարի իւրաց . և մինչեւ յաւելեալ
Պէղէթոյի սահման քաղաքին ՚ի հիւ-
սիոց ոչ ձգէր անդք քան զայս տեղի :
Հարկէ և և ՚ի հարաւոյ կաղմանէ յա-
պաւել դոյզն ինչ սակաւ հեռաւու-
րութեամբ յարեւմտեան դիմաց տա-
ճարին , զի արտաքոյ քաղաքին մեաս-
ցէ Պաղետոթոյ կամ տեղին կառափ-

ման . որ զի էր տեղի սահմանեալ 'ի
 սպանումն մահապարտից , ոչ պարու-
 նակէր ընդ շրջապատ պարսպօք քա-
 ղաքին : || Ե հանգութեաց երբէք բա-
 րեպաշտութիւն քրիստոնէից , և ոչ
 իսկ յառաջքան զաւուրս Կոստանդի-
 անսոի , զի այս տեղի մնացէ անծա-
 նօթ : Օ ի ում անծանօթ մնալոց էր
 տեղիդ . քրիստոնէից արդեօք դար-
 ձելոց 'ի հրեութենէ , զորոց սկասմե-
 Եսլիփան գալ բնակել վերստին յա-
 ւերական Երուսաղէմի յետ կործա-
 նելոյ քաղաքին 'ի Տիառուէ . և վարե-
 լոյ անդ կեանս 'ի շինութիւն տեսո-
 ղոց : Կոստանդիանոս՝ ըստ պատմելոյ
 Եւսեբեայ , տաճոր մեծ շինեաց 'ի վե-
 րոց տեղւոյն յամին 326 . զորմէ կա-
 րի 'ի դէսլ վկայէ և մատենագիր գրոց
 Ճանապարհորդութեանն 'ի Պոռաօ
 քաղաքէ Գաղղիացւոց յԵրուսաղէմ ,
 որ և 'ի քաղաքին յայնմիկ գտանէր
 յամին 333 : Եւ ժամանակն ծանօթ է
 մեղ 'ի Հիւսպատոսաց տարւոյն զոր
 նշանակէ . իսկ վասն տաճարին բանք

Ճանապարհորդին են այս . « Անդանօր
հրամանաւ կայսերն կառանդիանոսի
տաճոր կառուցաւ աէրունի , գեղեց-
կութեամբ զարմանալի ու Եւ թէպէտ
՚ի մուտա մետասաներորդի գարուն
Էլ Մանսուր Հաքիմի պիլտհ խոլիֆէ
՚ի հարստութէ ֆոդիմեանց Եգիպ-
տոսի ետ կործանել զտաճարս , զի ոչ
կարէր հանգուրժել խորէութեան
կարծեցելց հրաշոլի հրցն՝ զոր ելա-
նել ասէին Յցնք ՚ի ճրագալուցի զառ-
կին , սակայն կառանդին Մոնոմաքոս
կայսր Յունաց յետ երեսուն և եօթն
ամաց ՚ի 1048 թուին ընկալու ՚ի թո-
ռանէն Հաքիմոց զիշխանութիւն վե-
րըստին շինելց զնոյն եկեղեցի . Եւ
զծախս շինութեանն ետ կայսրն յիւ-
րոց գանձուց , որպէս պատմէ Գուշ-
լիէլմոս արհի եպիսկոպոս Տիւրոսի .
(Պատմ. Ա. 7) : Եւ ոչ յետ այսորիկ
բազումժամանակք անցին մինչեւ կոտ-
ֆրոտ Պուխլեօն էառ զերուսաղէմ
՚ի 1099 : Երդ՝ ուշ դնել արժան է ,
զի վերց գրեալ հանգամանքն որ յա-

զագս հնոյն Երաւսաղէմի , չունին տեղի տալ այլազգ իմաստից . և այնպէս Ճշգրիտ են՝ որպէս և գիրք լերինն Սիսնի ՚ի միւսոմեւ կողմանէ :

Չէ մարթ օտարս ինչ կարծել յազագս արեւելեան սահմանաց հնոյն Երաւսաղէմի . Յայտնի է և անկեզակարծ՝ զի հեղեղան կեդրոնի սահմանէր քաղաքին ՚ի նոյն գիծ , կամ կարիմօտ գծին՝ զոր ձգէր երես տաճարին յայնկայս դարձեալ առ եղերբ ձորս նոյն հեղեղատին . Յայտ է և այն թէ զոր սահման պարտ է ունիլ յարեմը աից կուսէ քաղաքին . ուշիւ հայելով ՚ի տեղադրութիւն քաղաքին , յորում բնական բարձրութիւն երկրին որ սահման գնէ տարածութեն Սիսնի յայսմ կողմանէ և ՚ի հարաւոյ , յերկարեալ և ՚ի հիւսիսոյ կողմանէ ձգի մինչև ցըրարձրութիւն տաճարին : Եւ ոչ ումեք իրաւունք են երկբայելոյ , զի այս ձգումն զառ ՚ի վայրացն որ ձգի և հայի ՚ի ձորն որ արաւաքոյ քաղաքին չիցէ կողմն Աքրոսի , բաց ՚ի գիմացն

որ հայէր ՚ի տաճարն : Օսյս կարծիս
 ամենեն ին արդարացուցանէ գեղեցիկ
 և քաջադէպ դիրք պարսպաց քաղա-
 քին ՚ի վերաց զառ ՚ի վայրին : Ունիմք
 առ այս յայտնաբան վկաց և զՊրօքարա-
 կրօնաւոր ՚ի Դոմինիկեան կարգէ , որ
 էր ՚ի Պաղեստին յամին 1283 , որպէս
 ինքն իսկ գրէ ՚ի ստորագրութեան
 ձանապարհորդութեան իւրոյ : Եանք
 զոր գրեմք աստանօր՝ վերածին յարե-
 մուեան մասն պարսպին Երուսաղէմի
 ձգեալ ՚ի Սիոնէ ՚ի կողմն հիւսիսոյ :
 “ Խորիսորատն կամ ձորն որ ձգի ՚ի
 ” կողմն հիւսիսոյ՝ ձեացուցանէր ըշ-
 “ խրամքաղոքին ըստ երկարութեանն
 ” մինչև ՚ի ծայր հիւսիսակողմանն . և
 ” ՚ի վերայ նորա էր ՚ի ներքուստ կող-
 ” մանէ ժայռ բարձրացեալ՝ զոր Յով-
 ” սեալոս անուանէ Աբու . որ ունէր
 ” զպարիսպ քաղաքին կառուցեալ ՚ի
 ” վերայ նորա պատելով յարեմոից
 ” զքաղաքն մինչև ՚ի գուռոն Եփրեմայ,
 ” ուր խոտորի յարեւելս կոյս ։ Այս
 ” բացասարութիւն գրչի՝ որ դրեաց ըստ

ծանօթութեանցն ստացելոց անդէն
 'ի տեղւոջն, կատարելապէս համեմատ
 գոյ գծագրութեան տեղւոյն որ տը-
 ւաւ մեղ. « Ճայռն առ խորիսրատաւ
 ո կամ խրամովն 'ի կողմն հիւսիսոյ եր-
 ո կարելով 'ի վեր ունէր զալարիսով քա-
 ո զոքին, ալտանեալ զնա յարեմաից մին-
 չ չե ցտեղի խոտորմանն յարելու » .
 Եւ այսափ բաւական է 'ի գիտել
 զայլ և այլ տեղիս յորոց բաղկանացը
 հինն Երուսաղէմ, և զիւրաքանչիւ-
 րոցն զնիստ և զդիրս » .



ԳԼՈՒԽ Բ.

Ը լաղաք հեյն Երուսաղէմ :

ՅուկսեՊՈՍՏ մանրապատում ձբշ-
 գրտաբանեալ զպարսպացն որ շրջա-
 նակաւ պատէին զԵրուսաղէմ, հան-
 գամանօք վիպացն կատարելապէս տե-
 ղեակս առնէ զմեղ շրջապատի հնոյն

Երուսաղէմի : Այս որոշակի նշանակէ
 պարիսպս երիս տարբերեալը՝ ի մի-
 մնանց . և հետագոյնն անուանեալ՝ ի
 նմանէ՝ ծածկէր ոչ միայն զՍիոն յար-
 ագոււստ կողմանէ քաղաքին , այլ և-
 բաժանէր զայս մասն ՚ի ներքին քա-
 ղաքէն կամ յԱբուայէն : Եւ ՚ի խօսիլ
 անդ զայսմ մասնէ՝ ստորագրէ Յովան-
 պոս զալարիսավն : Եսէ թէ աշտարակն
 անուանեալ Հիբրիքոս , կամ ձիոց , որ
 յեցե ալէր ՚ի կողմն որ ՚ի հիւսիս հայ-
 էր , « սկսեալ ՚ի հիւսիոց ՚ի Հիբրի-
 քուէ » . կամ ըստ բնագրին յունակո-
 նի . Ա-խօնէն աէ՝ տարա՝ վոռէ ան ոբօ-
 րու իբբիռու , անդը ևս ձգէր մինչեւ
 յարեմուեան սրահ տաճարին . որով
 արժան է մեզ իմանալ զարեմուեան
 հարաւային անկիւնն , առաջնօրդ ու-
 նելով յայսմ զգծագրութիւն քաղա-
 քին : Եւ յայտնի իսկ տեսանի՝ զի այս
 մասն պարսպին զվերին քաղաքն ան-
 ջրագետէր ՚ի ստորնոյն : Եւ թուի թէ
 այս իցէ հարաւակողման պարիսպ նո-
 րոյն Երուսաղէմի , որ արտօգոս փակէ

զՄիոն . որպէս զի ամենայնիւ իրաւու-
 նըս ունել մեզ՝ի հաստատել թէ աշ-
 տարակն Հիբբիքոս , որոյ դիբբ կարե-
 ւոր է մեզ որպէս տեսցուք ստորեւ ,
 ամբարձեալ էր՝ի կողմն հարաւային
 արեւմտեան անկետան սլարսալի նորս Ե-
 րուսաղէմի : Եթէ արժան իցէ հա-
 ւատալ բազմութեան պատմագրաց ,
 զպարիսպն այժմու շինեաց Սուլթան
 Սիւլէյման , որ՝ի 1520 յաջորդեաց
 հօր իւրոյ սուլդան Սէլիմի . և սորա-
 առաջնորդութեամբ առին Թիւրքք
 զաշւարհն Ասորւոց և զեգիպտոս :
 Աակայն Իտրիսի՝ որ գրէր զաշւարհա-
 գրութիւն իւր հրամանաւ Ռօճէռայ
 առաջնոյ արքային Սիկիլիոյ , որ մեռաւ
 ՝ի 1151 . յուցանէ մեզ զերուսաղէմ
 յաւուրս իւր ամենեին որպէս այժմն
 տեսանի , ասելով թէ երկարութիւն
 նորա ձգի յարեւմտից յարեւելս : Եւ
 յայտնի իսկ արտաքս փակէ՝ի սլարըս-
 պէ քաղաքին զլեառն Սիոն . զի՝ի վախ-
 ճանի ստորագրութեան իւրոյ ասէ՝
 թէ առ՝ի գնալ՝ի տաճարն , լորմէ քը-

բիստոնեայք անդէն իսկ յիւր ժաման
 նական ասէին թէ Քրիստոս անդ կա-
 տարեաց զվերջին ընթրիսն՝ և է 'ի
 վերայ լերինս այսորիկ, ելանել հարկ
 է արտաքս 'ի քաղաքէն ընդ դուռն
 անուանեալ Պապի Սիյուն, դուռն Սի-
 ոնի. և այս ճշգրտիւ համեմատի այժ-
 մու դրից քաղաքին: Եւնիամին Դու-
 տելացի այր Հրեայ՝ ճանապարհորդ-
 եալ 'ի 1175, ասէ թէ յայնմ ժամա-
 նակի բաց 'ի տաճարէ աստի ոչ գոյր
 այլեկեղեցի կամ շինուած կատարեալ
 'ի վերայ լերինն Սիոնի: Եւ զօր ըն-
 թեռնումք 'ի ճանապարհորդութեան
 Վիյլպրանտաց Օլոնէպուռկացւոյ, որ
 յամին 1211, յաղագս լերինն Սիոնի,
 « Եւժմ փակի ընդ պարսպաւ քաղա-
 քին, որ 'ի ժամանակի չարչարանաց
 « Տեառն մերոյ արտաքս մնայր »: զայս
 բան արժան է ընդ հակառակն իմա-
 նալ, միայն զի միտք բանին չիցէ թէ
 'ի ժամանակս չարչարանացն արտաքս
 մնայր: Եւ ընդ հանրապէս համեմատ
 գայ ճշմարտութեան ասել թէ 'ի տե-

զիս՝ յորս մասունք ինչ նախնի սկզբան
 պին համեմատ գան նորումն , դիբք
 տեղեացն և հետք նախնի հիմանն ո-
 րոշեալ թէ ուստի սկսանի նորն , այ-
 նու իսկ ՚ի յայտ գայ գծագրութիւն
 և հետք հնոյն : | միւս ևս պարագայ
 մասնաւոր՝ որ զայս ընդհանուր բան
 դօրացուցանէ , յաղագս բաժանելոց
 լերինն Սիոնի յԱքո այէն . այն է բազ-
 կաձև կորացումն պարսպին ՚ի հանդի-
 պոյ Սիոնի , զոր տեսանեմք ՚ի գծա-
 գրութեան քաղաքին , զննելով զարդի
 հարաւոյին պարիսպ քաղաքին ԵԵմի
 ՚ի մօտագոյն վայրս դրից տաճարին ,
 կամ լերինն Մօրիոյ : Օք թէ բար-
 եոք ածցես զմուռ , ոյսու և եթ օրի-
 նակաւ լեառն Յիոն կարէր բաժանիլ
 յԱքրայէն , զի սրակէս կանխաւ իսկ
 տեսաք ՚ի խօսել մեր վասն արքային ,
 տեղին նշանակեալ ՚ի գծագրութեան
 քաղաքին անուամբս՝ Տեղի բարձր ,
 յորմէ թուի ածանցեալ և բազկաձև
 խոտորումն զորմէ խօսիմք , հարկաւ
 և առանց երկբայութեան ցուցանէ

մեզ զմասն ի՞նչ բարձուն որ անուա-
նէր Աքրա . և չվրիպեմք արդեօք ՚ի
Ճշմարտութենէ՝ բարձրագոյն մասն
տեղւոյդ զառ դնելով , որով առաւել
և որոշէր ՚ի Սիսն լեռնէ :

Յովսեպոսի ստորագրեալ զհիւսի-
ույին կողմն շրջապատացն Սիսնի յաշ-
տարակէն Հիբրիքոսէ մինչև ՚ի տաճա-
րըն , վե բատին առնու յաշտարակէ ան-
տի ածել յարեմուտս կոյս , և անտի
հարկաւ ՚ի հարաւ մինչև յաղըիւրն
Սելովամ : Այս աղըիւր է ՚ի յատակ
խորին ձորսյ , որ հասանէ զստորին
մասն Սիսնի ձգեալ մինչև ցափունս
հեղեղատին կեզրոնի , և բաժանէ ըշ-
նու ՚ի մասնէ քաղաքին՝ որ ձգի զե-
զերք հեղեղատին մինչև ՚ի ստորոտս
տաճարին : Յայս ձոր հասանէր խոր
խրամն կամ ծործորն՝ որ զլեառն Սիսն
և զԱքրա բաժանէր ՚ի միմեանց . և
Յովսեպոս անուանէ զտեղիդ՝ Դօն Շե-
րօնի օն , պանրագարծաց : Խտրիսի որոշ
և յայտնի բանիւ յիշէ զայս ծործոր
ասելով . յելս ՚ի գրանէն Սիսնի լինի

իջանել՝ ի վոս ինչ, (այսպէս թարգ-
 մանեալ ունին Մառօնիք զարարացի
 բնագիրն,) որ անուանի ձոր դժոխոց.
 և անդ է աղբիւրն Սելովամ. Այս
 աղբիւր չէր փակեալ ընդ պարսպօք
 Երուսաղէմի. և զայս ասէ Երոնիմոս
 « գնացեալ՝ ի դրունսն որ ածեն՝ ի Սե-
 լովամ » . Օործորն յորոյ՝ ի յատակին
 է աղբիւրն Սելովամ, ձգի՝ ի հարաւոյ
 արեելից յարեմտեան հիւսիս : Պարտ
 է զՅովեպոս համարիլ ճշգրտաբան
 յասելիւրում՝ թէ պարիսպքաղտքին
 որ հայի՝ ի վերայ աղբերն Սելովամայ,
 ձգի՝ ի միոջէ կողմանէ՝ ի հարաւ, և
 ՝ ի միւսմէն յարեելս կոյս . զի այսպէս
 իսկէ և ըստ գծագրութեան տեղւոյն.
 և ճշդիւ իսկ տուեալ զբառսդ՝ պարիս-
 պըն ձգի զտփամբք գահաւանդին որ
 զծործորն զայն ձեւայուցանեն : Ճա-
 նապարհորդարանն Երուսաղէմի այս-
 պէս նշանագրէ զոտեղիդ . « ապա՝ ի
 ձորն մերձ՝ ի պարիսպն է աւաղանն
 կոչեցեալ Սելովամ » : Աշանակելի է
 և այն՝ զի զալարսպէս բանեք լինին՝ ի

գրեալս յաւուրս մեծին կոստանդիա-
 նոսի : Եւ յայսմանէ հետեւեցուցանել
 մարթ է , զի նորոգութիւն Երուսա-
 լէմի յետ կործանման նորա 'ի Տիտոսէ՝
 արարեալ յԱղրիանոսէ որպէս ասի ,
 և կոչեցեալ Ելիա Քաբիդովնա , ձգէր
 մինչև 'ի Սիոն որպէս յայլ մասունս
 քաղաքին : Որպէս զի աւերածոյն Սի-
 ոնի՝ որպէս այժմս երեխ , չեք նշանա-
 կել այլ պատճառ առաջին , բայց զա-
 ռումն և զկործանումն քաղաքին 'ի
 Խոսրովայ արքայէ Պարսից , որ էառ-
 զայն 'ի 614 : Ուստի չեն իրաւունք ըստ
 Ճառին իմանալ զբան Ապուլֆարա-
 ճայ , որ ասէ թէ Ելիա քաղաքն Ագ-
 րիանոսի՝ էր առընթեր Երուսաղէմայ
 կործանելոյ : Ոչ այլ ինչ նշանակէ այս
 քան , բայց զի տեղի քաղաքին որպէս
 էրն առժամանակօք պատմագրիս յետ
 երեւելոյ Մահմէտական կրօնիցն , չէ
 ճշդիւ նոյն տեղի յորում էր քաղաքն
 յաւուրսն առաջինս : Չէ պարտ կար-
 ծել թէ կիրառութիւն բառին Ելիա ,
 զոր Ապուլֆարաճ 'ի գործ ածէ , փա-

կիցի ճշդիւ ընդ ժամանակօք աւեսդու-
թեան հռովմէական պետութեանն .
դի արևելեան մասենագիրք երբեմն
՚ի գործ ածեն զբառդ էլիտ ՚ի նշա-
նակել զԵրուսաղէմ :

Այլ զի վերստին բուռն հարցուք
զհետոց պարսպին ՚ի Սելլվամայ ուր
թողարք , այս պարիսպ անցանէր ընդ
Օֆլա , և հասեալ վոխճանէր յարեւ-
լեան կողմն տաճարին . և այս ածէ
զմեզ յանկիւն անդր պարսպին օր ընդ
տրեւելս և ընդ հարաւ : Յիշի Օլֆլ
կամ Օֆէլ յայլ և այլ տեղիս սուրբ
Գրոց : Եւ փոխաբերաբար իսկ առ-
եալ լինի այս բառ . այլ դժուարին է
որոշել համեմատ մատոց բնագրին թէ
զի՞նչ նշանակիցէ . ինքնահաւանու-
թիւն , հպարտութիւն , կամ կուրու-
թիւն մատոց : Ո՞ե կնիչք բաժանեալք
են ՚ի միմեանց . ոմանց կարծեցեալ
զՕֆէլ տեղի բարձրաւանդակ , և այ-
լոց՝ խորին : Խակայն ոչինչ օտարալուր
թուի տարածայնութիւնդ . զի նշա-
նակութիւն բառիդ երեխ նման լու-

տին բառին ԱՌԵՐԵՆ, որ միապէս նը-
շանակէ բարձր և խորին։ Յօյն թարգ-
մանն փոխանակ Օֆէլ բառին եղ՝ Ստո-
րինին, (Դ. թագ. Ե. 24.) որ է՝ մթինք,
աեղի ընդ յարկաւ : Եւ արդարեւ ե-
թէ միտ դիցուք զի առ Յովսեպոսի
գտանի Օֆլու ճշդիւ յանցս պարսպին
յոյս երկիր խորին, զորմէ ասացաք ՚ի
խօսիլ անդ զՄօրիա լեռնէն թէ հայի
՚ի հարաւակողմն տաճարին, դիւրաւ
հաւանեսցուք թէ նշանակել Օֆլա
բառին տեղի խոր և մթին՝ արդարա-
նայ այսպիսեօք, և ոչ ինչ մնայ զոյս-
մանէ երկբայութիւն :

Տեղի օֆլայի յայտնապէս երևի ՚ի
բանս Յովսեպոսի, (Յաղ. պատերազմաց
Հրեից Զ. 7.) ուր խօսի զհերձեաց
կամ զկողմանց յորս բաժանեալէր Ե-
րուսաղէմ. և մի կողմն նոցա ունէր
զտաճարն և զօֆլա և զհեղեղատն
կեդրոնի : Եւ ՚ի գիրս Մեացորդաց
պատմի (Բ. Խնաց. ԼԳ. 14.) թէ ար-
քայ Մանասէ ընդ պարսպաւ քաղա-
քին փակեաց զԱփղա . և այս նշանա-

Առը է նա և այնու , զի ցուցանէ թէ
 քաղաքն Դաւթի չէր անցեալ ցայն-
 մամ զբնական սահմանօք լերինն Սի-
 ոնի , որ ՚ի կողաց ունի զգահաւանդն
 Սելովամայ : Եւ այս է թարգմանու-
 թիւն եբրայական բնագրին . « Ը ի-
 նեաց զարտաքին պարիսպ քաղաքին
 Դաւթի յարեմտից գեհոնի ՚ի հեղե-
 ղատին , ձգեալ մինչեւ ՚ի դուռն ձկանց .
 և պատեաց զնիղա , և ամրացոց ըշ-
 նա » : Այս բառք « զարտաքին պա-
 րիսպ քաղաքին Դաւթի » , ակնարկի
 առնեն զհետեռութիւնն որ անմիջա-
 պէս գայ զկնի . այն է՝ յաւելումն օֆ-
 լոյի , զի « պատեաց » ասէ : Ո՞եկնիչք
 զգեհոն և զՍելովամ նոյն համարին :
 Եւ ըստ այսմ « յարեմտից » պարտ է
 իմանալ զշարունակութիւնն առեալ
 յարեմտից Սելովամայ , այն է ՚ի Սի-
 ոնէ , որ ճշմարտիւ յարեմտից աղբերս
 ունի զդիրսն , մինչեւ ցափն հեղեղա-
 տին . « ՚ի հեղեղատին » , զոր բնապէս
 իմանալ արժան է զհեղեղատէն կեղ-
 րոնի : Զայս մեկնութիւն ամենենին

Համեմատ գտանեմք դրից տեղեացն :
որ ուսուցանէ մեզ զանազանել՝ ի մի
մեանց զտիրապէսն ասացեալ քաղաք
Դաւթի , և զոր ինչ յետոյ իմանի պա-
րունակեալ անդէն ՚ի տեղւոջն Սիոն :
Ասլա կատարելապէս գտաք զհետո
պարսպին որ պատէր զայս տեղի , և
նովաւ հանդերձ զկցորդս նորա մինչե
՚ի ստորոտս տաճարին :

Երկրորդ պարիսպն զորմէ խօսի
Յովսեպոս , ոչ ինչ մտանէ ՚ի նպատակ
բանից մերոց . զի փակէր ՚ի ներքս ՚ի
նմին իսկ քաղաքին : Ակսանէր ՚ի գրա-
նէն անուանեալ Ճէնաթ , կամ պար-
տիզաց , զի զայդ նշանակութիւն ունի
բառդ : Այս դուռն բացեալ էր յա-
ռաջին պարսպին , յայնմ որ զՍիոն և
զԱքրա բաժանէր ՚ի միմեանց : Եւ
այս երկրորդ պարիսպ յառաջ խաղա-
ցեալ ՚ի հիւսիսակողմն քաղաքին՝ ա-
պա խոսորեալ գնայր յաշտարակն Ան-
տոնեան , և անդ սպառէր : Աւրեմն
այս պարիսպ հատուած ինչ գործէր
՚ի տարածութեանն Աքրայի . ՚ի միոջէ

կողմանէ յեցեալ 'ի պարիսպն Սիոնի ;
 և 'ի միւսմէն յաշտարակին որ ծածկէր
 զհիւսիսային տրե մտեան տնկիւն տա-
 ճարին : Եւ նշանակին ալ է տեղի պա-
 ըստիս՝ կիտանիշ գծիւն որ բաժանէ
 զԱքրա , 'ի գծագրութեանն Երու-
 սաղէմի զոր մեզ առաջնորդ կալաք :
 Հաւանելի է թէ շինեցաւ ստ , քան-
 զի էր միւս ևս պարիսպ , որպէս է
 այն որ տռաւել մեծացուցանէ զտե-
 ղին Աքրա , զորմէ ունիմք այժմ խօ-
 սիլ : Ոիսյն զայս յաւելից տօտանօր .
 զի զայս մօտաւոր պարիսպ արժան է
 յաւէտ առաջի աչոց ունիլ , եթէ ոք
 կամիցի ոճով իմանալ զնորոդութիւն
 պարսպին Երուսաղէմի 'ի Նեմեայ .
 և տռաւել նման Ճմարտի է ընծայել
 զայն իշխանացն Ասամանացւոց , 'ի ժա-
 մանակի մեծի յաջողուածոյ գործոց
 նոցա . թէ սոքա շինեցին զնոր պա-
 րիսպն որ զհնովն պատէ , և տռաւել
 ընդարձակէ զտեղին :

Երբորդ պարիսպն՝ որ կցեալ ընդ-
 առաջնոյն պատէ զողջոյն ըրջապատ

պարսպին Երուսաղեմի , սկսանի ըստ
 Յովսեպոսի յաշտարակեն Հիբրիքոսի .
 Եւ 'ի ստորագրութենէ առաջնոյ պա-
 րըսպին ծանօթ է մեղ տեղի աշտա-
 րակիդ . և զայդ տեղի արդարացու-
 ցանէ բանն զօր նոյն պատմիչ գրէ
 յաղագս պարսպիս այսորիկ : Երդ՝
 այս պարիսպ սկսեալ յաշտարակեն
 Հիբրիքոսի ձգէր ուղղագիծ 'ի հիւ-
 սիս կոյս մինչև յայլ աշտարակ հռչա-
 կեալ յոյժ , Բոէֆինա կարգացեալ .
 Եւ այժմ իսկ տեսանեմք՝ զի արդի
 պարիսպ Երուսաղեմի ունելով զայս
 առաւելութիւն , զի տմբարձեալէ 'ի
 վերայ զառիվայրի բլոյն յորայ վերայ
 շինեալէ ստորին քաղաքն , ձգի 'ի
 հարաւոյ 'ի հիւսիս , 'ի հիւսիսային
 անկիւնէն Սիսնի՝ ուր պարտ է հա-
 մարիլ զաշտարակն Հիբրիքոսի , մին-
 չե 'ի դղեակն անուանեալ Բիզեանց .
 Եւ աշտարակն Բոէֆինա՝ ըստ նորուն
 Յովսեպոսի յայլում վայրի պատմե-
 լոյն , ոչ իւիք ստորին էր քան զայլ
 ամենայն տմբութիւնս Երուսաղեմի :

Եւ այժմ իսկ գղեակն Բիղեան թուի
 բերդ ինչքաղաքին . աստ նստի աղայն
 և բերդապահ զօրքն : Յոյն ոմն Փոկաս
 անուն՝ որ յայց ել սրբոց Տեղեացն
 յամին 1185 , և զՃանապարհորդու-
 թիւն նորա տպագրեաց Ալատիոս ՚ի
 ժողովածու գիրս իւր , ասէ թէ այս
 աշտարակ՝ կամ տիրապէս ասել դը-
 ղեակ , զի այսպէս կարեմք ճշգրտիւ
 տալ զիմաստ յոյն բառ իցդ Բիշ' ջու բահ-
 մելի՛ որադօ , բուրգն ամենամեծա-
 գոյն , անուանէր յերուսաղէմոցւոց
 աշտարակ Դաւթի , և դնէ զնա ՚ի հիւ-
 սիսակողմն քաղաքին . և Եպիփան նը
 քաղաքացի անուանեալն՝ ըստ Յունաց
 Այխօլէտի , դնէ զդա առ դրամբն որ
 հայի յարեմուտս . և այս Ճիշդ և է
 հայելով յայժմու դիրս քաղաքին Ե-
 րաւսաղէմի : Իստ պատմելոց Պրօքար-
 տայ միակեցի՝ զոր վաղու ևս յիշեցաք,
 աշտարակն Դաւթի պարագրէր ար-
 դեօք ՚ի տարածութեան անդ լերինն
 Սիոնի , և ամբառնայր յայնմ անկեան
 ուրանօր խոտորէր ձորն անջրապետ լե-

րինս յԱքրայէ , և անկիւն գործէր
 ընդ արեմտեան գտհաւանդ լերինն
 Սիսնի . և այս տեղի առաւել պատ-
 շաճեալ թուի Հիբբիքոսի քան Բոէ-
 ֆինայ : Այլ այս ոչ ինչ խափան լինի
 յիշատակելց 'ի սմին իսկ պատմու-
 թեան զաշտարակն կամ զդղեակ բի-
 զեանց : Յայտնապէս երեւի այս 'ի
 բանքս յայսոսիկ . "Վ էմն՝ յորս վերս
 " յարե մտից կողմանէ կառուցեալ էր
 " պարիսպ քաղաքին , էր բարձր յոյժ .
 " մանաւանդ յանկեանն ուր արեմը
 " տեան պարսպին մասն կցի հիւսիսա-
 " կանին . ուր և աշտարակն Նէպլօդա
 " ասացեալ , և մարտկոց ամուր յոյժ ,
 " որոյ աւերակք ցայժմ տեսանին :
 " Ուստի ամենայն Արաբիա և Յոր-
 " դանան և ծովն մեռեալ և այլ բա-
 " զում տեղիք , եթէ յստակ իցէ օդն ,
 " կարեն տեսանիլ": Այս վերջին յա-
 ւելուած բանի , որ զգերազանցու-
 թիւն տեղւոյն յայտառնէ , կարի յար-
 մարաբար որոշէ զմեր վարկած յաղա-
 գըս տեղւոյն որ լաւ ևս պատշաճիցի

Նախնւոյ աշաարակին Բոէ Փինոյ , որ
պէս և այժմու գղեկի Բիզեանց : Ա
սասցուք և զայս՝ զի զբ ինչ Պրօքարտ
պատմէ մեղ աստանօր , ամեննեին հա-
մեմատ է գրեցելումն 'ի Յովսեպսէ ,
(Յաշ պատէր . Հրեիյ , Զ . 6.) թէ 'ի ծա-
գել արեու յաշտարակէն Ֆէնինեայ՝
տեսաներ Արարիա և ծովին և հեռա-
ւոր գաւառք Հրեաստանի : Եւ թէ
պէտ անհաւանելի է թէ դղեակն ըստ
այժմու վիճակին իցէ նոյն ընդ այնմ
զորոյ ունի զտեղին , և անիրաւ է ըզ-
շինութիւնն ընծայել Դաւթի՝ որպէս
համարեցաւ Փոկաս . սակայն տեղի
գղեկիս է նոյն իսկ տեղի առաջնոյն :
Իենիամին Դուտելացի պնդէ՝ թէ
պարիսպք շինեալք 'ի Հրեից նախ-
նեաց իւրոց՝ կային մինչեւ յժամանա-
կըս իւր , այն է մինչեւ յերկոտասան
գարն , ունելով բարձրութիւն տասն
կանգուն :

Եւ ահա այս ինչ զաներկբայելի
վճիռն ածէ 'ի վերայ , եթէ դղեակն
Բիզեանց և աշաարակին Բոէ Փինոյ ըզ-

մի և նոյն տեղի ունին։ Յովսեացոս ա-
 ռէ թէ այս աշտարակ՝ ի կողաց կոսր
 անկետն քաղաքին դարձելոց՝ ի հիւսիս
 և յարեմուտու . և որովէս տեսաք՝ Պրօ-
 քարտ այսպէս ստորագրէր զտեղին
 զորմէ բանքս են . և ուր արեմուեան
 պարսպին մասն կցի ընդ հիւսիսայ-
 նոյն ։ Արդ նշանակել արժան է , զի
 ՚ի բարձրութեան հիւսիսային կողման
 դղեկին Բիղեանց , կամ արեմուեայ
 գրանն՝ որ կցորդ է այսմ կողման , չէ
 մարթ արտաքոյ քաղաքին թողուլըզ
 Գողգոթայ , եթէ ոչ խոտորեսցի պ
 յարեելեան կողմն։ Ապա դղեակն Բի-
 ղեանց՝ յոր հասաք ու զղակի զհետո
 ունելով պարսպին յաշտարակէն Հիր-
 բիքոսի , կամ գծի որ դաշն ինչ՝ ի հիւ-
 սիս խոտորի , Ճշդիւ ունի զոյս ան-
 կիւն նախնի պարսպին։ Ապա միաձայ-
 նել պարտ է , զի թէ առաւելագունի
 հաստատութեան կարօտ լինէր տեղի
 Ճիբբիքոսին , գտանէր և նմա տեղի
 Ճշդրիտ որպէս Բաէ Փինային , որով և
 համեմատեալ դրիցն ։

Արժան է դիտել և զպտումառ ա-
 նուանակոչութեան դվեկին Բիղեանց,
 ըստ Եւրոպեանց՝ Քասթէլ Բիղանօ
 կոչեցեալ. այլմեղ չէ պատահեալ ինչ
 'ի վէպս՝ որ ուղղակի վերաբերութիւն
 ունիցի առ այս : Աակայն ստոյգ թուի
 թէ Բիղացիք՝ աէրութիւն զօրաւոր
 յոյժ երբեմն, մասին 'ի պատերազմն
 խաչակրաց, և եղեն նոցա տեղիք և
 իշխանութիւն յԱքիա, 'ի Սուր, և
 յայլ տեղիս պաղեսաինացւոց : Պօղոս
 Թուօնչի հեղինակ տարեգրոցն Բիղայի,
 (Թղթ. 35.) Երկուց յիւրոց քաղաքա-
 կցացն ընծայէ զպտրծանս նախ առա-
 ջին վերելակելոց սանդղովք ընդ պա-
 րիսպն Երուսաղէմի յառման քաղա-
 քին զօրավարելով Կոտֆրոա Պույլեօ-
 նի : Դիտելի լիցի և այս՝ զի առաջին
 Լատին առաջնորդն որ նատաւ 'ի պատ-
 րիաբական աթոռ Երուսաղէմի, Եր
 եպիսկոպոս ոմն Բիղացի անուանեալ
 Տափակբդ : Եւ ես կարծեմ թէ աշ-
 խատեցաւ ինչ գտանել տեղի մի 'ի
 գղեկին առ 'ի տալ նմա 'ի յետին Ժա-

մանակո զանունն զոր ունի այսօր . Ի
ժամանակաց անտի՝ զի Պրօքարտ էր
յԵրուսաղեմ , այն է ՚ի վախճանիլ
երեքտասաներորդի գարուն , տեսա-
նեմք զայս աշտարակ անուանեալ Նէպ-
լոզա . և ՚ի լեզու արևելեաց բառդ
Նէասլոլիս յոլովակի զայս օրինակ թե-
քի . Աւ չեն ինչ զարմանք , զի այս կը-
րօնաւոր խօսի զայսմ տեղւոյ՝ որպէս
թէ աւերակ իցէ կամ քանդեալ յոյժ.
ծանօթ գոլով մեզ , զի իբր երեսուն
և երեք ամօք յետ առնլոյ Սալէ հէտ-
ափնայ զԵրուսաղեմ , ՚ի 616 ամի հիՃ-
րէթին , և ՚ի 1219 մերոյ թուաբերու-
թեանս , իսա եղբօրորդի իշխանիս և
կուսակալ Դամասոկոսի , ետ քանդել
զամրութիւնս Երուսաղեմի . և Տա-
վուտ որդի սորա յետ քսան ամաց
քակեաց զմի յամրոց անտի զոր շի-
նեալ էին Գաղղիացիք ՚ի քաղաքին
յայնմիկ :

Յովսեսպոս յետ Բոէֆինայ վախ-
ճանէ զստորագրութիւն պարսպին Ե-
րուսաղեմի ՚ի հիւսիսային կողմանն :

Վինչչե Պէղէթա յաւելեալ՝ ՚ի քաղաք
 քըն և մեծացուցեալ էր զնա, ոչ այլ
 իմիք էր խնդիր յաւարտել զպարիսպ
 քաղաքին յայնմ կողմանէ՝ բայց գնալ
 յաշտարակն Անտոնեան առ հիւսի-
 սային արևմտեան անկետմբ տաճա-
 րին։ Ուստի ոչ ինչ բանք են զաշտա-
 րակէ աստի՝ յորժամ խօսք լինին զեր-
 բորդէ պարսպէս։ Յովսե պոս նշանա-
 կէ անդանօր անկիւն մի առ ՚ի հասա-
 նիլ շրջագծաւ յափն հեղեղափին կեղ-
 րոնի . և մեք տեսանեմբ զի և այժմու-
 պարիսպն՝ յորում փակի գետին Պէ-
 ղէթայի, տայ զայս անկիւն ոչ սակաւ
 հեռաւորութեամբ յարևելեան ան-
 կիւնէ տաճարին՝ յոր անկէ հասանել-
 ։ յժմու պարիսպ Երուսաղէմի հե-
 ռանալով ՚ի հիւսիսակողման երեսաց
 տաճարին ընդարձակէ զտեղի Պէղէ-
 թային, մինչեւ ոչ ինչ նուազլինելքան
 զստորին քաղաքին . և այս թուի պատ-
 շաճաւոր և բաւական։ Յովսե պոս
 նշանակէ մեզ զանձաւս թագաւորա-
 ցըն իբրև տեղիս ուղղուկի ՚ի հանդի-

պոյ ճանապարհի պարսպին 'ի կողման
 նեն որ հոյի 'ի հիւսիս : Այս անձաւք
 գտանին մօտ յանձաւն անուանեալ
 Երեմիայի . և ոչ է մարթ առաւել ևս
 ամփոփել զայս անձաւ , բայց եթէ
 կալեալ զշաւիզ նորոյ պարսպին , որը
 պէս հետեւի 'ի գծագրութենէ անտի
 Երուսաղէմի : Յովսեպոս պնդէ՝ թէ
 անունդ Պէզէթա նշանակէ զասաց-
 եալն 'ի Յունոց Քէնի՝ Բօ'լու , նոր քա-
 զաք . բայց հակառակին նմա 'ի նորոց
 Վիլալբանտ և Լոմի , որ այլազգ մեկ
 նութիւնս հանձարեն : Ագրիպաս
 առաջինն 'ի համանուն թագաւորս առ-
 կացսերութեամբ Կղօդեայ սկսեալէր
 շինելզայն պարիսպ որ պատէ զտեղիդ :
 Եւ զոր ինչ նա չհամարձակէր կատա-
 րել , ամբառնալով զպարիսպն 'ի բար-
 ձրութիւն բաւական առ 'ի պաշտպա-
 նութիւն , զայն յետոյ Հրէայք կա-
 տարեցին :

Այսու օրինակաւ 'ի ծանօթու-
 թիւն գան ոչ միայն այլ և ոյլ մասունք
 յորոց բաղադրէր քաղաքն Երուսա-

զէմի , 'ի մեծի տեղւոջն զոր պարագրէր , այլև զնոյն իսկ տեղիս ընդ որս
 անցանէր պարիսպն՝ այսու գտանեմք : Այնչեւ սյս ամենայն պարագայից հաւ-
 արքեալ և միացեալէին 'ի մի կէտ տես-
 ութեան , և ճշգրտեալ համեմատու-
 թեամբ նոյն իսկ տեղեացն , անստոյգ-
 կարծէին զամենայն եղանակս հաստա-
 տելոյ զմիտս ուրուք յաղագս վիճակի-
 և դրից հնոյն Երուսաղէմի . և համա-
 րէին թէ չէ մարթ գիտել դիւրաւ-
 զուարածութիւն նորտ համեմատեալ
 ընդ արդի նոր վիճակին : Այս անըս-
 տուգութիւն չունի ինչ տեղի . և տես-
 ցի յորոց ունիմք ասել ստորե , թէ
 չափ շրջապատի նախնոյն Երուսա-
 ղէմի՝ որ 'ի նոյն իսկ 'ի հին մատենից
 առեալ լինի , ոչ այլով եղանակաւ կա-
 րէ իմանիլ , բայց ճշգրտիւ համեմա-
 տելով ընդ այժմու չափն զոր 'ի տեղ-
 ւոջ անդ առնումք : Յայտ է թէ այս-
 պիսի պատշաճութիւն հարկաւ պա-
 հանջի , զի մի ինչ սխալ իմասցի յամ
 վերաբերեալս հնոյն Երուսաղէմի :

ԳԼՈՒԽ Գ.

Այժմու չե՞ յարակածին ԵՐՄԱԿԵԴ :

Ա ՍՏԵՂԱՆ ՀԱՓՈւցն որ 'ի գծագը-
րութեան Տէղհեյոյ , պահանջէ բա-
ցարութիւնս ինչ և պարզաբանու-
թիւնս . ուստի հաւատարմութեամբ
տաց աստանօր զհամար ամենայնին զոր
ինչ կարացի նշանակել մանրակրկիտ
խուզողութեամբ : Տեսանի անդանօր
գաւազան մի 'ի նշան հարիւր քայլեց .
առ նովաւ է միւս ևս գաւազան եր-
կար քան զառաջննն , և առ նովաւ
թիւն հարիւր . և կէս նորա բաժա-
նեալ 'ի մասունս տասն տասն : Հա-
մեմատելով լնդ միմեանս զերկարու-
թիւն երկուց գտւազանացս , դիւրին
է ճանաչելվեր 'ի վերոյ տեսութեամբ՝
թէ մի 'ի դոցանէ նշանակէ զհասարակ
քայլ , և միւսն զձողաչափ : Այլ ոչ և
զոյն պատրուակեցից , զի ճիշդ հա-
մեմատութիւն ոչ գոյ լնդ մէջ երկուց
չափուցդ : Աստիճան հասարակ քայլ-

լից հաշուեալ առ յինէն՝ թուեցաւ
 ինձ նշանակել զշրջապատ քաղաքին
 իբրև հինգ հազար հարիւր քայլս . և
 զմի քայլ համարեալ սանաչափս երւ
 կուս և կէս՝ որպէս թուի հասարակ
 քայլն , լինին երկոտասան հազար և
 հօթն հարիւր և յիսուն սանաչափք ,
 կամ երկու հազար հարիւր քսան և
 հինգ ձողաչափք : Այլ միւս գաւա-
 զանն՝ զորմէ ասացոք ձողաչափս ցու-
 ցանել , առց մեզ ձողաչափս իբր եր-
 կու հազար միայն . այն է ՚ի հիւսիսա-
 կողմանն , և յանկեանն որ ընդ հիւսիս
 և ընդ արև մուտս հիւսիսոյ՝ 677: Յա-
 րե մուտս մինչեւ ցանկիւն հարաւոյ ա-
 րեմտից՝ 355: Ի հարաւ՝ 544: Եւ
 յանկիւնէն որ ՚ի հարաւոյ արեելից
 դնալով յառաջինն յարեելեան կող-
 մանէն՝ 428: Ազգոյն՝ 1004: Իստ այսց
 չոփաւց հարկ թուի արտաքս թողուլ
 զցցուեալ տեղիս աշտարակաց և ըդ-
 մառունս ինչ պարսպին դոյլն ինչ ՚ի
 ներքս մուեալս . այլ ճշգիւ առաք ըդ-
 չափ ամենայն խռարմանց և ամենայն

դարձուածոյ նշանակելոց ՚ի գծապ-
 րութեան անդ : Եւ որ ինչ չէ օրէն
 լինել յայսմ, ՚ի սակի չափոյն առելոց
 ը ցուցանելոյ աստիճանի քոյլիցն, որ
 է առաւել մանր և ճշդիւ զննել ըզ-
 քառեակ գլխաւոր հայեցուածո՞րստ
 որոց կարգեալ գտանի տեղին Երու-
 սաղէմի, թուեցաւ մեղ և զայն վեր-
 ածել յաւէտ ճշդութեամբ ըստ աս-
 տիճանաց եղելոց ՚ի նշանակ ձողաչա-
 փից . զի այս առաւել ճշդրիտ թուե-
 ցաւ մեղ քան զմիւսն : Թէպէտ զայս
 նախամեծար ընտրեցաք, և զպատճա-
 ռըս ընտրութեանս տացուք յետ սա-
 կաւուց . մեղ դնեմք և այսմ գաւա-
 զանի ձողաչափուց , զի զմիջոց յիսուն
 ձողաչափուց , այն է զիէս գտւազանին
 բաժանէ ոչ ճշդութեամբ . քանզի այս
 բաժանել մասն կարճ է համեմատու-
 թեամբ ամբողջ գաւազանին . և յայն
 աստիճան հասի իմով խուղարկու-
 թեամբս, մինչեւ գտանել թէ չափեալ
 զըրջապատ Եհմի ըստ այսմ մասին
 գաւազանին որ ունի զբաժանումնն :

Հասանէ 'ի ձողաչափս երկու հազար
և երկու հարիւր :

Հաւանեալէ և մեր թէ այսպիսի
վրիպակք ոչ ինչ ստեանեն ճշգրտու
թեան աստիճանաց գծագրութեանն
Երուսաղէմի . ստկայն չէ արժան յայռ
պիսի թերութիւնս հայելով բոլորու
վին անպիտան համարել զաստիճանս
չոփուց գծագրութեանն : Այսցի թէ
գաւազանն որ ցուցանէ զհարիւր ձո
ղաչափս՝ ինձ թուեցաւ ճշգրտագոյն
քան զմիւսն : Օ չափ աշտարակին Ե
րուսաղէմի ըստ այժմու վիճակին , և
որպէս ցուցանէ մեզ Տէղհէյ 'ի գծա
գրութեանն , տայ մեզ Մառնտրէլ
Անդղիացի 'ի գիրս Ճանապարհորդու
թեան իւրոյ 'ի Հաղէպոյ յԵրուսա
ղէմ , գրուած մի 'ի պատուականաց
անտի գտելոց առ մեօք , որպէս ամեւ
նեքեանն հաւանին : Այս Ճանապար
հորդ Ճարտար և յոյժ ճշգրտաբան
թուէ իւրով քոյլիւն քայլս չորեքհա
զարև վեց հարիւր և երեսուն զշրջա
պատ պարսպին Երուսաղէմի չափեալ

յարտագուշտ կողմանէ . և տպա նշաւ
 նակէ թէ զտասանորդն հանեալ ՚ի
 թուոյ տատի տայ դչափ չորս հազար
 հարիւր վաթսուն և եօթն կանգնոյ
 ըստ Անդղիացւոց . այն է՝ զի տասն
 քայլք առնեն ինն կանգուն : Արդ՝
 զիանգունն անգղիական համարեալ
 կէս ձող անգղիական , զի երեք ուս
 նաչափն է մի կանգուն , այս ձողա
 չափ համեմատի ութ հարիւր և մե-
 տասան գծից գաղղիական ունաչա-
 փից ըստ ճշգրտագոյն հաշուի . և այս
 յաւելու այլ ևս ՚ի համեմատութիւնն
 ընդ գաղղիական և ընդ անգղիական
 ունաչափս զոր կանխեցաք նշանակել .
 և իմ ընդարձակ ճառեալէ զոյսմանէ
 ՚ի Ճառն որ յաղագս չափուց ճանա-
 պարհորդութեան : Աւստիչորս հազար
 հարիւր վաթսուն և եօթն կանգունք ,
 կամ երկու հազար և ութսուն և երեք
 և կէս անգղիական ձողաչափք տան
 1,689,718 գծաչափս . որ առնէ 140,
 810 բթաչափ , կամ 11734 ունաչափ
 և երկու բթաչափ , կամ 1955 ձողա-

չափ, 4 ոտնաշտոփ և 2 բթաշտոփ։ Արդ
եթէ զշափս զայս բովանդակեսցուք
՚ի 1960 ձողաշափս, զկոտորակեալսն
և զմիաւորսն անտես առնելով, և ըզ-
շտոփ գծագրութեանն Տէղհէյայ առ-
ցուք 2000, միջին համեմատականն
հասանէ ՚ի 20 ձողաշափ հեւաւորու-
թիւն ՚ի ծայրից անտի . կամ ՚ի հար-
իւրորդական մասն բովանդակին . և
զի՞նչ առաւել համապատշաճ իցէ գր-
տանել յայս նիւթ զորմէ ճառեմքս ։
Յերես ոչ նուազ քան զայս տարբե-
րութիւն իցէ գտանել յայլ և այլ
գծագրութիւնս մի և նոյն քաղաքի
կամ ամրոցի սահմանաց մերոց, առ-
եալս ՚ի զանազանից։ Արժան է հա-
մարել պատճառ ընտրութեան և նա-
խամեծար համարելոյ զգաւազան աս-
տիճանաց ձողաշափին ՚ի գծագրու-
թեան անդ, որ թէպէտ խոտորումն
ունի ՚ի ճշգութենէ յայլոց աստիճա-
նաց ՚ի գծագրութեան անդ նշանա-
կելոց, և նուազէ ՚ի չափուն քան
զայլսն, ստկայն առաւելուն մեզանչէ

քան այլ ազգ , համեմատեալ ինդ չու
փուն զոր էաւ . Առաւնարել 'ի վերոց
նոյն իսկ տեղւոյն :

Յ Ե Ա Խ Խ Ո Ւ Դ .

Չ ա ՛ լ լ շ ա պ ա ս ի հ ն ո յ ն Ե ր ա ս ա ղ է մ ի :

ՅԵ Տ Ք ն ն ե լ ո յ և ճ ա ն ա չ ե լ ո յ զ ա ս ո յ գ
չ ա փ տ ա ր ա ծ ու թ ե ա ն 'ի վ ե ր ո յ յ ա ս ա
կ ա գ ծ ի ն ո ր ո յ ն Ե ր ո ւ ս ա ղ է մ ի՝ ք ն ն ե ս
ց ո ւ ք ա ր դ զ ւ ա փ շ ր ջ ա պ ա տ ի հ ն ո յ ն ,
զ ո ր գ տ ա ն ե մ բ ն շ ա ն ա կ ե ա լ 'ի մ ա տ ե ա
ն լ ր ա հ ն ո ւ թ ե ա ն : Ի բ ա ց ա տ ր ո ւ թ ե ն է
ա ն տ ի հ ն ո յ վ ի ձ ա կ ի ք ա ղ ա ք ի ն , և 'ի
դ ր ի ց ն ո ր ա և յ ա ն փ ո փ ո խ ե լ ի հ ա ն գ ա
մ ա ն ա ց տ ե ղ ե ա ց ն զ ո ր ո ց վ ե ր ա գ ո յ ն դ
խ օ ս ե ց ա ք , օ ր ի ն օ ք ի մ ա ս ա ա ս ի ր ե մ բ թ է
չ ո ւ ն ի մ բ ե ր կ ի ն չ ե լ 'ի վ ի պ ե լ ո յ 'ի ք ը ն
ն ե լ մ ե ր զ ս ա հ մ ա ն ս հ ն ո յ ք ա ղ ա ք ի ն :
Ե ւ չ ո ւ ր ջ ա ն ա կ ի 'ի տ ե ղ ւ ո ջ ա ն դ ր տ
ն ի ն զ ս ա հ մ ա ն ն , ո չ մ ի ո յ ն 'ի պ ա տ մ ա ւ

թենէ գործոցն երեւելեաց յիւրաքանչ
շիւր վայրս վերաբերելոց , այլ և 'ի
պատշաճից նոցին իսկ տեղեացն : Այս
է զոր Պրօքարտ ասէ . “ Զոր յաղագս
” տեղեացն ամրութեան փոխաբերել
” չ մարթ յառաջնոյ տեղւոջէն ” :
Ենուկէս զի ճշգրտաբար մարթ է 'ի
յատակագծէ տեղւոյն զըրջապատն
գուշակել . և ապա 'ի վերայ նոյն իսկ
յատակագծին ձգել գիծ շուրջանակի
և նշանակել զպարիսպն՝ նոյն ընդ բուն
պարսպին : Օսյս հնար է ամենեցուն
փորձել ու շովիտհելով 'ի վերայ գլ
ծագրութեան յատակի հնոյն Երուա
սաղէմի : Այս պարտ է 'ի քննութիւն
մատչիլ չափուցն զրոց են մեր բանք :

Եւսեբի յաւետարանական պատշ
բաստութիւնսն , (Գլ . թ . Գլ . 36 .)
ուսուցանէ մեզ թէ , ըստ չափելոյ
ուրաւմն լարաչափի Ասորւոյ , Դու ՛ի
սիրեաս սիմոնէ՛ Ռը - , չափ շըրջապատի
պարսպին Երուսաղէմի է 27 ասպարէզ
Յայլմէ կողմանէ և Յովսեսոս (Յան.
պատէ . Հրէիյ , Զ . 6 .) զըրջապատ բա-

զորին թուե ասպարէզս 33: Ծառ վը-
 կայութեան նորուն Եւսեբեայ, Դի-
 մոքարէս գրեաց 'ի պատմութեան Ան-
 տիոքոսի թագաւորի երեւլոյն, թէ
 շրջապատ Երուսաղէմի էր 40 ասպա-
 րէզ: Արիստէաս հեղինակ պատմու-
 թեան եօթանասնից թարգմանչացն
 որ կեցին և գրեցին առ ժոմտնակօք
 Պտղոմեայ եղբայրասիրին՝ զնոյն չափ
 տոյ քաղաքին զոր և Դիմոքարէս: Եւ
 Եկադէս, զորոյ զբանան 'ի վկայու-
 թիւն առնու Յովոեալու յառաջին
 գիրսն ընդգէմ Ապակիսնի, տոյ 'ի շրջա-
 պատԵրուսաղէմի տսպարէզս 50: ՈՒիւ
 ասպարիզացն զոր նշանակեցաք ասու
 սկսեալ 'ի 27 թուոյ հասանէ ց50: Քա-
 նի տարբերութիւն, և զիարդ ծանի-
 ցուք զպատշաճն յայսչափ տարբե-
 րութեան միջի: Աչ գիտէ թէ այս
 պատշաճութի պարզեալ իցէ ուրեք:
 Ո՞ինչև ցայսօր այս չափք 'ի վարանս
 մեծ արկին զիմաստունս, և այսմ վը-
 կայ երաշխաւորեսցէ ՌԱՀԱՆ մի յա-
 ռաւել տրդտրախոհ քննողոց որ իսօ-

եցան յաղագ այսր իրի . որոյ հաւ
շանեալ չափուն աւանդելոյ ՚ի Յով,
սեպոսէ , որ են տապարեզք 33 , ապտ
յաւելու ասել . “ Աչ հաստատեմ ըզ
որտն մեր ՚ի վկայութիւն լարաչափին
ո Ասորւոյ , որ քսան և եօթն ասպա-
ռ ըէլու տատց առ Եւսեբեայ զըրջա-
ռ պատ Երուսաղէմի ո .

Աակայն այս չափ քսան և եօթն առ
պարիզաց զոր նախ կարգեցաք , ար-
ժանի է ակնածութեան ըստ իմիք .
զի է գործ լարաչափի . այն է՝ չափ ա-
ռեալ լարիւ . Սիմոնէ՛ Տրու . Փոքր թիւ
ասպարիզին քան յայլ չափս նշանա-
կեալս վերագոյնդ՝ տոյ մեզ գուշակել
առաւել երկայնութիւն յասպարեզն ,
որ է առանց հակառակութեան ծա-
նօթագոյնն քան զամենայն , և ա-
նուանեալն ասպարեզ Ողիւմբեան .
Երկայնութիւն սորա սահմանի 94 ձռ-
զաչափ . 2 ոտնաչափ և 8 բթաչափ .
զի այսչափ հաշուին 600 հելլենական
ոտնաչափը , որք առնեն ասպարեզ մի .
Եւ չափ Հելլեն ոտիցն է $\frac{1560}{1440}$ ոտնա-

շափ Փարիզու . որ է Ա բթաշափ և
 կծաշտփիք 4: Վելա 27 ասպարէզք գոր-
 ծեն 2550 ձողաչափս : Եւ հետք նախ
 նի պարապին Երուսաղէմի ըստ ընդ-
 արձակագունիք տեղւայն զոր կարիցե
 պարագրէլ, թուի դրաւելիբր 2699
 ձողաչափս ըստ աստիճանաց ձողաչա-
 փու գծագրութեանն Տէղհեյայ : Եւ
 եթէ իցէ առ ուրուք գծագրութիւնն
 այն և կորկին մի առձեռն, կարէ ան-
 ձամբ առնուլ զշտին և ճշգրտել ըզ-
 բան մեր : Մակայն և զայն դիտեա,
 զի ըստ չափուն Մատւնարէլայ , որ տաց
 հազարինն հարիւր և վաթսուն փոխա-
 նակ Երկու հազարի ՚ի շրջապատ նո-
 րոյս Երուսաղէմի , կամ յիսներորդ մի
 պակաս , շրջապատն զորմէ այժմ՝ խո-
 սիմք վերածի յերկու հազար հինգ հա-
 րիւր և յիսուն ձողաչափս ըստ համե-
 մատութեան քսան և եօթն ասպարի
 զացն : Եւ այսպէս առ ՚ի դիւրութի
 ընթերցողին բաժանեալ զհետս պա-
 րըսպի նախնւայն Երուսաղէմի ՚ի հա-
 շաստր մասունս և ՚ի թիւ յիսուն և

միոց ամեն մի ՚ի մատանց այտի սկարպել
նաև քշգրտիւ ձողաշափս յիսուն ,
ըստ չտփուն Մատւնարէլայ : Եւ այս
է յառին՝ զի քառասուն և ինն առեալ
օգոստիսանակ յիսնի ըստ աստիճանաց
դժագրութեանն :

Այս տաիցէ ոք . այս չտփ այսու
որինակաւ յարմարեալ պարսպի հնոյն
Երուսաղէմի , զմնացէ ալսն ամենայն
չնափա անտես առնել արժանիցէ : Տամ
այս այս պատասխանի , զի առ նախնիա
այլ և այլ չտփ են ասպարիզաց ըստ
տարբեր ժամանակաց մատենագրացն .
և այս գոտանի երբեմն ՚ի մը և նոյն ժա
մանտկի և առ նմին իսկ մատենագրի .
յոլով անգամ ՚ի կիր արկանեն զոյնս
անորոշակի , ոչ նշանակելով զշգրիտ
չտփ տարածութեն . և այսու ստիպեն
զմեղ ըստ փորձոյ և ըստ գատողական
արուեթատին գուշակել թէ որ յասպա
ըիզացդ ՚ի դէպ իցէ տեղւոյն և ժա
մանակին : Այժման է հաշուով քննել
զերեսուն և զերիս ասպարէզ աւան
դեալը ՚ի Յովլեպոսէ . և գտանել առ

պարէզ՝ որ հինգերորդաւ միով մա-
 սամբ նուազ իցէ քան զԱղիւմբեանն,
 և զայսմանէ խօսեցեալէ մեր ՚ի փոք-
 րիկ Ճառին որ յաղագս չափուց ճա-
 նապարհորդութեան։ Յնուի թէ կար-
 ձութիւն այսր ասպարիզի յարմարաց
 գոյն գործէ զսա ՚ի չափ միջոցաց պա-
 րագրելոց ընդ պարսպօք քաղաքաց
 քան ՚ի չափ մեծացն՝ ըստ որոց կարեն
 չափիւ գաւառք և նահանգը։ Չա-
 փըն զոր ՚ի գործ ածենն Դիոգորսու թիւ
 կիլիացի և Պլինիոս ՚ի նշանակել ղերշ-
 կարութիւն մեծի կրկիսին Հռովմաց
 վերածի յայգ ասպարէզ և ոչ յԱղիւմ-
 բեանն։ Այս ասպարէզ է 75 ձողաչ
 չափ, 3 ոտնաչափ, և բթաչափը 4։ և
 թիւ երեսուն և երից ասպարիզաց
 ըստ սմին չափու առնէ 2493 ձողաչ
 չափ, և ոտնաչափս 2։ Երդ զի՞նչ պա-
 կասէ ՚ի չափոյ աստի առ ՚ի կատարե-
 լապէս համեմատ գալ 27 ասպարիզաց
 ցըն Աղիւմբեանց, յիսուն և քանի մի
 ձողաչափ։ Կոտորակ մի ասպարիզին
 և ձողաչափ մի աւելի բարդեալ ՚ի վեց

բայ ասպարիզին՝ եթէ ումեք այսպէս
կամք իցեն առնել, ոչ ինչ տարբերու-
թիւն ածէ 'ի մէջ յայսպիսի հաշիւս:

Խերեւս հարցցէ ոք . բայ յայսմ
յարմարութենէ հաշուոյ իցե՞ն այլն ս
պատճառք 'ի կարծել թէ երկարութի
շափուն ինքնին յարմարիցի հանգա-
մանաց պարագայիցն զորոց խօսիմք .
Այլ զի նպատակ ճառիս զորմէ բուռն
հարեալ է մեր՝ ունի ածել զմեղ և
'ը քննութիւն շափուց Եբրայեցւոց .
տեսցի 'ի ստորև, զի մղոնն եբրայա-
կան հաշուի եօթն ասպարէղ և կէս .
որպէս նոքին իսկ Հրեայք գրեալ ա-
ւանդեցին մեղ: Եւ շափ մղոնիս լեռլ
երկու հաղար կանգուն հրեական՝ հա-
մեմատուի շափուն տայ հինգ հարիւր
վաթսուն և ինն ձողաշափս և երկուս
ոտնաշափս և ութ բթաշափս: Ուստի
ասպարէղն ըստ շափու Հրեից լինի եօ-
թանասուն և վեց ձողաշափ՝ պակառ-
եալ քանի մի բթաշափուք . և ոչ ինչ
տարբերեալ համարի 'ի շափոյ անտի
զոր վերտագոյնդ տուոք . Եւ այժմու

համեմատութիւնն առաւելեալ իւիք
 քան զոր հաշուեցաք վերագոյն յայս
 տեսակ ասպարիզի , երեսուն և երեք
 ասպարէզք պարսպին Երուսաղէմի լի-
 նին առաւելքան զերկու հազար հինգ
 հարիւր ձողաչափս , քառասնիւ և եթ
 և այլքսնի մի ձողաչափու թերի քան
 զվերոյ նշանակեալ չափ ըջապատի
 պարսպին : Այլ առաւել ևս ճշդես-
 ցուք , և ստուգեացուք զգործածու-
 թիւն այսր չափու ասպարիզիս 'ի Յով-
 ոեպոսէ , նորուն իոկ ինքեան Յովսե-
 պոսի վկայելովն : Օի 'ի գիրս հնու-
 թեանց . (Գիրք . Ի . Գլ . 6 .) ասէ թէ
 լեառն Զիթենեաց հնգիւք ասպարի-
 զաւ հեռիէ յԵրուսաղէմէ : Արդ ըստ
 չափուն նշանակելոյ 'ի գծագրութեն
 Տէղհէյոյ որ ձգի մինչև ցդագաթն
 լերինս այսորիկ , չափեմք զհետս եր-
 կուց ճանապարհաց իջելոց 'ի լեռ-
 նէ անտի մինչև 'ի մերձաւորագոյն
 ոնկիւն տաճարին , և գտանեմք 49
 մասունս քսան ձողաչափից ըստ ցու-
 ցանելոյ գաւազանի ձողաչափիցն հա-

բիւրոց բաժանելոյ ՚ի հինգ մասունք .
Եւ այս վերածի յասպարէզս հինգ .
զի բաժանումն երեք հարիւր և ութ-
անից հնգիւ՝ տայ եօթանասուն և վեց .
Եւ ոչինչ երկրոցելիք է , զի առ ՚ի յառ-
նուլ զշափ տարածութեանն ընդար-
ձակագոյն մաօք՝ զծայրն շափելի կա-
րեմք տանել անդր քան զկատար լե-
րինն . Եւ այս ոչ է դիպուածովինչ
լեալ , կոմ ըստ հաճայս գործածու-
թիւն , ոյլ պատճառ կիրառութեանն
է որ տեղի տայ պատշաճութեան
հաշուոյ երեսուն և երից ասպարի-
զայ , որպէս և տեսաք :

Եցցաւք տրդ ՚ի քննել զքառա-
սուն ասպարէզ շրջապատին Երուսա-
ղէմի : Եւ առ հաշուել զայս պիտին
նախ երկու զննութիւնք : Եռաջի-
նըն է , զի հեղինակիք որ ետուն մեզ
զայս շափ , գրեցին առ ժամանակօք
Մակեդոնացւոց թագաւորաց որ յա-
ջորդեցին Ալէքսանդրի յարեելս : Եր-
կրորդն է , զի քաղաքն Երուսաղէմ առ
ժամանակօք թագաւորացս այսոցիկ

ոչ փակէր տակաւին ՚ի ներքս զթազն
 անուանեալ Պէզէթա, որ ՚ի հիւսիսոյ
 կողմանէ է տաճարին և Անտոնեան
 աշտարակին . զի Յովսեպոս ասէ թէ
 յաւուրս Կղօդենայ սկսաւ այս թագ
 մասնել ՚ի մէջ պարսպաց քաղաքին .
 Եւ այս ինչ օտար երեւեսի արդեօք ;
 զի առ ՚ի յարմարել շրջապատին Երու-
 սաղէմի զառաւելութիւն ասպարի-
 զաց՝ առաւել և յապաւեմք զքա-
 զաքն և փոքրկացուցանեմք : Ըստ չա-
 փու գծադրութեն զոր ունիմք մեզ
 յառաջնորդ՝ տեսանեմք զի Պէզէթա
 արտաքս մնացեալ ՚ի քաղաքէն, նուա-
 զեն ՚ի շրջապատէ անտի քաղաքին ձռ
 զոցափք իբր 370 . զի կիծն որ արտաքս
 թողու զՊէզէթա, լինելով ձողաչափ
 իբր 300, առ ՚ի փակել զնա ՚ի ներքս
 պիաի 370 ձողաչափ : Եթէ շրջապատ
 Երուսաղէմի պարագրեալ և զՊէզէ-
 թա՝ լինին ձողաչափք 2550 ըստ հաշ-
 մի 27 սովորական ասպարիզացն, յոր
 և հաշիւ Մառնորէլոյ ճշդիւ հա-
 մեմատ դայ, կամ առ տառելն՝ ձո-

շոշափք 2600, ըստ աստիճանաց գը-
ծագրութեանն Տէղհէյոց, ապա 'ի
թողուլ մեր արտաքս զՊէղէթա՛ չափ
չըջապատին Երուստղէմի լինի ձողա-
չափք 2180, կամ առ առաւելն՝ 2280.

Առ ասացելովքս յաւելումք և
դոյս . չե՛ ինչ երկրայելի՝ զի 'ի չոփ
որշաւանացն Աղեքսանդրի այլ ազգ
հաշուին ասպարէզք, փոքրունք յոյժ
առ համեմատութեամբ այլոց ասպա-
րիզոց . և մարթ է մեզ զՃշգրիտ հա-
մեմատութին առնուլ յԱրիստոսելէ՝
որ վարժապետն էր Աղեքսանդրի . զի
օս զմեծի երկրագնուոյն զչափին ասէ՝
թէ աստիճան մի նորա ունի ասպա-
րէզս 1111. Իւ մեր արարեալ է քըն-
իութիւնս ինչ 'ի Ճառն մեր յաղագո-
չափուց ճանապարհորդութեան, 'ի
վերայ ոյսր կարճագոյն ասպարիզի .
զոր մարթ է կոչել մակեդոնական. Իւ
պափ տուեալ յԱրիստոտէլէ ոչ ըն-
կալոք 'ի նմին որպէս և էրն առանց
իրիք քննութեան. Այլ չափ համե-
մատութեան առ ոք զազգ ինչ ոտիւ-

շափի որ է մասնաւորապես սեղհաւ
 կան այսր տեսակի ասպարիզաց . և ըստ
 այսմ շափու՝ բաւեն ասպարէզք 1050
 'ի շափել զմի աստիճան ՚ի վերոյ գրե-
 լոց անտի . Եւ ծանուցեալ այսու օ-
 րինակաւ զսկիզբն շափու այսր աս-
 պարիզի՝ կարեմք ճշդիւ իմն ասել թէ
 ասպարէզ մի լինի ըստ մերոյ շափուս
 54 ձողաչափ , 2 ոտնաչափ և 5 քթա-
 չափ . ուստի և 40 ասպարէզք առնեն
 2173 ձողաչափ . ի՞չ տպաքէն այս իսկ
 էր և զոր 'ի վերնում հաշուին գտաք .
 Եւ 'ի վերոյ յաւելցալ այլ ևս 370
 ձողաչափս՝ զոր արտաքս թողաք , զի
 Պէղէթա ոչ պտրունակէր յայնժամ 'ի
 քաղաքին . զնոյն գումար գտանեմք
 լոր ինչ գտաք 'ի հաշուել մեր զբան
 և եօթն ասպարէզն .

Այլ ներեսցի ինձ հարնանցի նը-
 շանակել աստանօր և զայս , զի ոչ ու-
 մեք մարթէ համարիլ թէ հնար իցէ
 իմիք կամիլ ինայութեամբ վարիլ 'ի
 պատշաճոյ յաղագս շրջապատին Երու-
 սողէմի 'ի առհմանել զմէն մի 'ի ըս-

փուցն զօր գտանեմք 'ի նախնեաց ան-
տի աւանդեալ մեզ : Եւ եթէ ոյօ
պատճառք ըստ բաղդովի պատահե-
լյն այնչափ և յայսնիք են , ոչ ապա-
քէն իրաւունս ունիմք իմաստասիրել
աստի թէ նոյն խսկ սահմանք և չափ
համեմատութիւ գտեալք առ 'ի մէնջ
զՃշմարտի զգենուն զկերպարան :

Անոյ մեզ միւս ևս չափ յիսուն
ասպարիզաց աւանդեալ յԵկատեայ :
Եւ չիք ինչ պատճառ զարմանալոյ թէ
այս մատենագիր հասուցեալ զթիւ-
բնակչացն Երուսաղէմի յերկուս մի-
լիսնս , կամ իբր յերկու միլիսն և 'ի
հարիւր հաղար , յաւելքան թէ յա-
պաւեաց զչափ մեծութեան քաղա-
քին . և զարուարձանս և զբնակու-
թիւնս որ շուրջ զքաղաքաւն և ար-
տաքայ նորանեցաց և հաշուեաց իբ-
րեւ մասունս նորուն քաղաքի : Այ-
սր ինչ հնար էր Ճշմարտիլ զթուոյ Հը-
րէից , հաշուեալ և զորս 'ի տօնի զատ-
կին 'ի տեղեաց տեղեաց հասանէին
անգր , ոչ կարէր Ճշմարտիլ յուղագու

չափու. առարածութեանն՝ որպէս կայչ
ըլն միշտ Երուսաղէմ. Այլ և եթէ
զբիսուն ասպարէզս չափեսցուք ըստ
մակեդոնեան ոտնաչափից զօրմէ արդէ
իսկ խօսէաք, որ և յաւէտ պատշա-
ճաւոր թուի մեզ, ունիմք զգումար
2700 ձողաչափից, և այս համեմատու-
թիւն առաւելու հարիւր և եթ ձու-
շաչափու քան զասաիճան չափուց որ
՚ի գծագրութեանն Տէղհէյայ.

Ի մի կէտ տեսութեան առեալ
զայս սմենացն համեմատութիւնս չա-
փուց՝ գտանեմք զի շրջապատ պարըս-
սին Երուսաղէմի առ առաւելն հա-
սանէ ՚ի ձողաչափս իրը Երկու հազար
հինգ հարիւր և յիսուն. թող զայն զի
սյժմու չափն այդպէս կոմի, անմեր-
ժելի է առ այս որ ՚ի նախնեացն վը-
կայութիւն. Բայ հեակութեան այ-
սըս չափու իմաստասիրեմք, զի մեծա-
գոյն տարածութիւն տեղւոյն զոր պա-
րագրէրն Երուսաղէմ՝ կամ Երկայնու-
թիւն նորա լինէր ոչ աւելի քան զինն
հարիւր և յիսուն ձողաչափս, իսկ ըստ

նաթիւնն էր կիսով չափ։ Եւ այս
 պէս տարածութիւն նորա լինի իբր
 վեցերորդ մասն Փարիզու, և յայս տա-
 րածութիւն ոչ առնումք զարուար-
 ձանս որ տրտաքոյ են դրանցն։ Եւ չէ
 արժան յայսմ համեմատութենէ առ-
 նուլ համեմատաբար և զթիւ ընակչ
 չացն։ Իաց՝ ի աեղւոջէ տաճարին՝ որ
 ունէր և սա վիւր սեպհական բնակիչ
 որն, մարթ էր Երուսաղէմ առաւել
 և սամփոփիլ համեմատութեամբ քան
 զՓարիզ, յորում են տունք մեծամեծք
 և պարտէզք ընդարձակք, որպիսիս
 անմարթ է ենթադրել թէ գտանէին
 և ՚ի հինն Երուսաղէմ։ և սոքօք հան-
 գերձ առնել զնա քաղաք մի մեծ

ԳԻ ԱԼԵՔ Ե.

Կը բժիշ ու առաջ տա զիշ յալք
ու բարձութեան Երանակէմ ։

Չև գրջապատին Երուսաղէմի
սրոշեալ ըստ պատշաճի բաղդատու-
թեամբ տեղւոյն՝ և համեմատութք
ամենայն չափուց զորս աւանդեցին
մեզ նախնիք, զմեն մի ՚ի նոցանէ ՚ի
զնին առնլով, չէ ինչ անվայել տե-
սանել թէ որչափ խոտորեցան ՚ի ճշ-
մարտութենէ ոմանք ՚ի քննչաց։ Ա իւ
լաբանտօ համարեցաւ թէ երեսուն
և երեք ասպարէզքն նշանակեալք ՚ի
Յովսեպոսէ՝ զտարածութիւն. Սիսնի
և եթ ցուցանեն, առանց այլոց մնա-
ցեալ մասանց քաղաքին։ Խորհեցայ
և հաշուեցի՝ զի ըստ այդմ վարկածոց
գրջապատ Երուսաղէմի համեմատա-
բար հարկէ լինել ասպարէզս եօթա-
նասուն և հինգ։ Եւ չափ ասպարիզի
զնոյն առեալ՝ զոր ՚ի կիր արկաք ՚ի ճշ-
գրաել զերեսուն և զերիս ասպարէզսն,

քսու այսմ հաշուին ձողաչտփք հինգ
 հազար և եօթն հարիւր : Անձ ևս է
 անտեղութիւնն՝ եթէ ոք խոփիր ինչ
 ոչ գիտելով ընդ չափս ասպարիզացն՝
 զսովորական ասպարիզին առցէ զշտփ.
 զի և այլքն ոչ քաջ ծանուցեալք են
 տռ ամենեսեան մինչև ցոյսօր : Չոփ
 ոյսր ասպարիզի հասուացէ զըրջապատ
 քաղաքին 'ի ձողաչափս եօթն հազար
 և երկերիւր, և աւելի ես . որ է գոդ-
 ցես եռապատիկն ճշգրիտ չափուն :
 Արդ հարցանեմ. կարէ այդչափ ձո-
 ղաչափու ճշմարտիլ 'ի վերայ տեղւոյն՝
 որոյ ճշմարիտ և բուն սահմանք ծա-
 նօթք են 'ի դրից տեղեացն և 'ի բը-
 նական տրամադրութեանցն : Կտրե՞մք
 ուրդեօք բաժանել զտեղի լերինն Սիո-
 նի յայժմու դրիցն, և այլուր փախա-
 բերել : Ոչ տպաքէն 'ի միոջէ կողմա-
 նէ սահման կոյ հեղեղատն կեդրոնի,
 և 'ի միւսմէ տեղին կառափման : Եւ
 Յովսեալոս ինքնին իսկ ցըէ զսոյդ վար-
 կած, որպէս բարւոք նշանակեաց ի-
 մաթուուն և քաջ քննարւոնն Ռէլսն ..

տոելով թէ շրջապատ գծի սլաշարման
քաղաքին՝ ի Տիառուէ, զի պաշտրեաց
զԵրուսաղէմ ողջոյն և ոչ զմի մասն մի-
այն, էր երեսուն և ինն տոպարէզ:
Ի ձիշդ չափ շրջապատի նախնւոյն Ե-
րուսաղէմի ոչ կարօտիմք դիմախօսու-
թեանց, որ սովորաբար՝ ի գործ ածին
յորժամ չափք ցուցեալք՝ ի հնոց հա-
կառակ գան դրութեան իմիք. այն է
տոել թէ վրիպակ թուանշանաց իցէ
՚ի բնագրին:

Դամի կրօնաւոր բազմահմուտ ՚ի
ատուար մատենին իւրում որ յաղո-
գըս սրբոյ քաղաքին և տաճարին, բդ-
չափ շրջապատի քաղաքին հասուցանե-
յասպարէզ վաթսուն. հիմն իւր ու-
նելով զայս ինչ, զի էին շուրջ զքա-
զաքաւն աշտարակք հարիւր և քսան,
և սրահք նոցա. և մի ՚ի նոցանէ սլա-
րունակէր տեղի տարածութեան կան-
գնոց երկերիւրոց, որ առնէ կես առ-
պարէզ: Եւ արդարե այս թիւ կան-
գնոց հեռաւորութեան միոյ աշտա-
րակին՝ ՚ի միւսմէն՝ աւանդի մեզ ՚ի

Յովսեակոսէ . այլ զի նոյն պատմիչ թը
 է աշտարակս հարիւր վաթսուն և
 չորս յերիս այլ և այլ պարիսպս քա-
 ղաքին բաժանեալ , և յոյս միջոց մը-
 տանէ նաև և տեղին որ բաժանէ զԱի-
 սն յԱքրայէ , և Աքրա ունէր միւս
 և պարիսպներքին , և պարսպաւ բա-
 ժանեալ էր ՚ի Պէզէթայէ , դժուա-
 րին է յայսպիսի հիման վրայ կառու-
 ցանել ինչ վարկած : Եւ միշտ անըն-
 տուգութիւն բազում է յայսմ , թէ
 և արդի չափ տեղեաց ոչ ինչ հակա-
 ռակեսցի դրութեանդ : Եւ զայն ևս
 արժան է նշանակել , զի իմաստուն
 մատենագիրդ առ ՚ի մէնջ նշանակեալ՝
 և ոչ իսկ իւրոց բանիցն համաձայնս
 խօսի , եթէ զհաշիւ նորա համեմա-
 տեմք գծագրութեան յատակին Երու-
 սաղէմի զոր աւանդէ մեղ : Քանզի ըս-
 տոյգ երեկի եթէ ասպարէզքն զորս
 նայն ՚ի կիր արկանէ՝ են սովորական
 ասպարէզք . զի ՚ի Ճառն յաղագս չա-
 փուց՝ զոր իւր նախաշաւիլ դնէ գը-
 րոց իւրոց , սահման տայ միայն մից

և Եթ տեսակի ասպարիզի : Յայս չափ՝
 շրջապատ Երուսաղէմի ըստ հաշուին
 Լամեայ դոյզն ինչ աւելի քան զհինդ
 հաղար վեց հարիւր և վաթսուն ձու
 զաշափս թուի : Արդ ըստ յատակա-
 գծին զորմէ խօսեցաք , շրջապատ Ե-
 րուսաղէմի համեմատութեամբ կող-
 մանց քառակուսւոյ տաճարին է որ-
 պէս քառասուն և մի առ երկուք : Եւ
 նոյն չափն աստիճանեալ զոր դնէ 'ի
 պատկեր յատակագծին Երուսաղէմի ,
 'ի գործ ածի նա և վասն պատկերի
 տաճարին , որոյ կողմաւնք համարին ի-
 բը հաղար հարիւր և քսան սանա-
 չափք գաղղիականիք : Ուստի և շրջա-
 պատ քաղցքին 'ի յատակագծի անդ
 հասանէ միայն 'ի քսան և երեք հաղար
 սանաչափս . կամ դոյզն ինչ աւելի քան
 զերեք հաղարութհարիւր և երեսուն
 ձողաչափս . և այս վերածեալ յասպա-
 րէզ լինին առ առաւելն ասպարէզք
 քառասուն և մի : Եթէ դիտեսցի և
 այս զի յատակագծին Լամեայ թուի
 համեմատ հայեցաղական գիտութե ,

և մօսն տաճարին տեսանի հեռագոյնը , յայսմանէ հետեի թէ որ յառաջակողմն պատկերին են և մօտաւորք՝ առկաւ պարտին գրաւել տեղի . և այսու առաւել ես կարծի շրջապատ քաղաքին : Դժագրութիւն յատակի քաղաքին՝ զոր ունիմք ՚ի Տէղնէյայ , արւետլէր և Կամեայ . տպագրեալ էր յոյն աւուրս և Ճանապարհորդութեանն մատեան Մասւնտրէլայ . և օրէն իցէ արդեօք իմաստնոյ առն յիւր զննութիւնս և եթ հաւտտալ յամենայնի . և զոր ինչ արտաքոյ տեղեկութեանն մնայ՝ զոր ինքեան միայն սեպհական կարծէ , զոյն տմենայն մերժել արհամարհանօք :

Օ զոր ինչ տեսանեմք յերկուս յայսափկ մեծահռչակ մատենագիրս՝ որ միայն իմաստնապէս և խորին քննութեամք պարապեցին ՚ի գրել զալարըսպէն Երուսաղէմի , այս արդարացուցանէ՝ որպէս ինձ թուի , զոր ինչ ՚ի յառաջաբանութեան Ճառիս այսորիկ ասոցաք , թէ տարածութիւն

քաղաքին չեր ճշգիւ սահմանեալ մին
չե ցայժմ. և մատենագիրք կուտա-
կութեամբ բանից խօսեցան :



ԳԼՈՒԽ Զ.

Չո՞ պարածութեան պահարին :

Առաջնութեան որ ետ մեզ զչափ եր-
կայնութեան և լոյնութեան մեծա-
հոչակ մզկիթին կառուցելոյ ՚ի աեղ-
ւոջ տաճարին, թուի մեզ ոչքաջ միա-
դնել տարբերութեան երկուց տեղ-
եացն, որ տեսանին ՚ի գծագրութեն-
Տէղհեյոյ : Օկերկայնութիւնն ասէ-
հինդ հարիւր և եօթանասուն քայլա-
չափս ըստ քոյլից իւրոց . որ վերած-
եալ յիւրմէ ՚ի ճշգրիտ հաշիւ ըստ
բանիցն որ յաղագս շըջապատի պա-
րըսպին, լինի հինդ հարիւր և երեք-
տասան կանգուն անգղիական, որ է
երկու հարիւր և քառասուն ձողացափ:

Ատկայն ՚ի յատակագծին գտանեմք մի
 պահ ձողաչափս երկերիւր և հնդետա-
 ռան : Պատճառ վրիպակիս կարէ ծա-
 գիլ գոնէ ըստ մասին ինչ յայնմանէ՝
 զի Մառնտրէլ համարեցաւ զանկիւն
 տեղւոյս առաւել մօտ ՚ի դուռն ա-
 նուանեալ սրբոյն Ստեփաննոսի : Այլ
 այս ինչ է մասնաւոր յիշատակի ար-
 ժանի , զի վրիպակիդ ոչ ինչ իւիք ըս-
 տնանէ այնմ որ հայի ՚ի շրջապատքա-
 ղաքին : Օ ի ըստ նմին Մառնտրէլոյ՝
 մասն սլարսպին որ է ՚ի միջոցի վերոցի-
 շեալ դրանն , և անկեանն որ ՚ի հա-
 րաւոյ արևելից քաղաքին , որ և է
 չափ տեղւոյն զոր պարագրէ մզկիթն ,
 գտանի ըստ մասնաւոր չափու ճանա-
 պարհորդիդ այդորիկ քայլաչափս վեց
 հարիւր և քսան . և ըստ նորուն հա-
 շուին այս չափ վերածի ՚ի հինգ հա-
 րիւր յիսուն և ութ կանգուն անդ-
 զիական . և ըստ մեզ՝ երկերիւր վաթ-
 սուն և երկու ձողաչափք՝ քանի մի բը-
 թաչափով պակաս : Արդ աստիճան
 յատակագծին թուի տալ երկերիւր

վաթսուն և հինգ ձողաչափս, զոր թէ
և ևս ճշդեսցուք՝ լինին ձողաչափք եր-
կերիւր և վաթսուն ըստ ճշդրիտ հա-
մեմատութեան աստիճանիս ընդ չա-
փուն աւանդելոյ 'ի Մառնտրէլոյ:

Ի համառօտութեան արեելեայ
աշխարհագրաց՝ զոր արար Ռընօտո,
և ցարդ ձեռագիրք կան յիմում ար-
կեղ, երկայնութիւն գետնոյ մզկթին
Երուսաղէմի նշանակի 'ի չափ եօթն
հարիւր իննսուն և չորից կանգնոց:
Եւ չափ կանգնոցն է յայսմ չափ արա-
բացւոց: Եւ զի մի առ այժմ 'ի քըն-
նութիւն չափու կանգնոյս պարա-
պեալ հեռագոյնս 'ի մերմէ խնդրոյս
զարտուղի ելցուք, առ այժմ զըովան-
դակութիւն առից զչափոյս այսորիկ.
և յետ ճառելոյ զչափուց երայակա-
նաց՝ տաց և զայսմանէ տեղեկութիւն
մանր՝ առանձին գլխով. Այժմ շատ
լիցի ասել՝ զի անկասկածելի եղանակ
Ճանաչելոյ զկանգունն սովորեալ յա-
րաբացիս՝ է 'ի համեմատութիւն առ-
նուլ զմզանն արաբացւոց: Ո՞ի մզոն

արաբացւոց պարունակէր կանգունս
 չորս հազար . և զի ՚ի շափու երկրին
 որ առաւ յաւուրս էլ Մամաւն խա-
 լիքէին՝ միջոց միոյ աստիճանի այսու-
 մղոնաւ շափեալ հաշուեցաւ մղոնք
 յիսուն և վեց և երկու երրորդք . յայս-
 մանէ հետեւի զի մղոնն արաբացւոց է
 հազար և վեց ձողաչափ , հաշուեալ
 զաստիճանն յիսուն և եօթնհազոր ձո-
 ղաչափ . զի մի հարկ լիցի մանրակրկիտ
 խուզողութիւն առնել ՚ի վերայ աստի-
 ճանացն աշխարհագրականաց և շա-
 փունոցա : Արդ հազար կանգունք ա-
 րաբացւոց՝ են հաւասարք երկերիւր
 և յիսուն ձողաչափից , և ինն ոտնա-
 շափից . այլ մեք առ այժմ կարեմք
 զոտնաշափուտ արտաքոյ մերոյ հաշուիս
 թողուլ : Եւ փոխանակ եօթնհարիւր
 իննառն և չորս կանգնոց տռետլ ըզ-
 բոլըրական թիւն ութ հարիւր՝ ելա-
 նեն անվիշէալ հաշուով ձողաչափք եր-
 կու հարիւր : Աւստի համար երկերիւր
 և երեքտասան ձողաչափից որ ՚ի գը-
 ծագութենէն Երուսաղէմի առան ,

յորում ամենայն վայրքն նշանագը-
րեալք են, առաւել ընտրելի է քան
զհաշխւն որ ՚ի մեծադաշն ևս չափ ձը-
գեալ տանի զմեզ:

Իստ նորուն Մառնտրէլայ՝ լայ-
նութիւն գետնոյ մղկթին է երեք հա-
րիւր եօթանասուն քայլաչափ, որ է
հարիւր յիտուն և վեց ձողաչափ, և
ոսնաչափք չորք և կես: Արդ՝ չափ գը-
ծագրութեանն հասանէ իբր ՚ի ձո-
ղաչափո հարիւր եօթանասուն և եր-
կու: Եւ զայս ինչ դիտել արժան է
տատանօր, զի զոր ինչ աւելի հաշուեալ
էր Մառնտրէլ ՚ի լոյնութեանն՝ կո-
րուսանէ զայն ՚ի հաշուել զերկայնու-
թիւնն. և յայսմանէ օրինօք իմաստա-
սիրեմք թէ տարբերութիւն հաշուին
Մառնտրէլայ է ոչ ՚ի գումարելն, այլ
՚ի բաժանել անդ զթիւն գումարեալ
յերկայնութիւնն և ՚ի լոյնութիւնն:
Եւ թուի թէ շինուածք կցեալք ՚ի
շրջապատ որմ մղկթին ՚ի ներքս ՚ի քա-
ղաքին առաւել դժուարին գործեցին
առնուլ զչափ շրջապատի տաճարին

քան զքաղաքին : Եւ նոյն ինքն իսկ
Մառնտրէլ խոստովան լինի թէ ար-
տաքուստ կողմանէ հարեանցի և եթ
հաշուով եգիտ զայս թիւ : Եւ զի՞
վերայ այսր նիւթոյ մանր ՚ի քննու-
թիւն մռանեմք, ծանիցի այս ինչ, զի
զամենայն պարագայս որոշակի տւան-
դեալս ՚ի գիրս՝ ճշդիւ զննեմք, և ոչ
ինչ ծածկեմք և ոչ ինչ յաւելու մք ՚ի
հաշիւն զոր տամք աստանօր :

Առանձին մեծարանօք յարգեալէ
մզկիթն որ յարաբացւոց անտի շին-
եալէ ՚ի վերայ տեղւոյն տաճարին :
Խօմէր առեալ զԵրուսաղէմ ՚ի հըն-
գետասան ամի հիճրէթին, այն է՝
յամի Տեառն 637, էարկ զհիմն մզկր-
թիս. զոր բազում զարդուք պՃնեալ
զտրդարեաց խալիֆէն ԱպտիւլՄէլիք
որդի Մէրվանայ : Առ համմէտականք
այնչափ պատուեն զայս տեղի, զի զու-
գափառ համարին տաճարին քեապէի
որ ՚ի Մէրքէ՝ և կոչեն Ել-աքսա, որ է
ծագ կամ ծայր, առ որոշումն ՚ի միւս-
մէ տաճարէն : Եւ երեկի թէ մասնաւ-

ւորապէս ինստմ կալան՝ ՚ի մէջ շինուածոց մզկթին փակել զբովանդակ տեղի Սողոմօնեան տաճարին, որպէս ասէ Կոլիոս ՚ի ծանօթութիւնս իւր ՚ի վերայ աստղաբաշխութեանն Ալֆէրկանոյ, (Թղթ. 156): Փոկաս ճանապարհորդ՝ զորվագոյնդ յիշեցաք ուրեք, և գրէր յերկոտասաներորդ դարին, յայս կարծիս է յայտնապէս, թէ բովանդակ գետինն որ շրջապատէ զտաճարն՝ է գետին հնոյ տաճարին. Բայց՝ ո՞ն դու մէռը լու նառ՝ առինքն։ Եւթէպէտ կործանեալէր տաճարն, բայց զհետան գտանելչէր ինչ անհնար, ճանաչէր գոնէ տեղի մեծակառոց շինուածոցն կանգնելոց ՚ի հաւասարութիւն կողմանց տաճարին և ՚ի փակելամբողջ զգետինն. և տեղի նոյն իսկ տաճարին՝ որ էր ՚ի վերայ լերինն Մօրիայ։ Չորեքին կողմունքն յորս բաժանէր շրջապատ տաճարին՝ հայէին ՚ի չորս գլխաւոր կողմունս աշխարհի։ Օանօթ էր և այս՝ զի մուտք տաճարին հայէր յարեելու, և սրբութիւն

սրբութեանցն էր 'ի հանդիպակողման
 նընյարեմուտու : Յայսմհամեմատու
 թիւն էր դրից տեղւոյ տապանտկին .
 և յայս ամենայն զոր ասացաքս՝ երկ-
 բոյելի ինչ ո՞չ գոյ : Արդ չորից կող-
 մանցն դիրք մինչեւ ցայսօր տեսանի և
 'ի շրջապատ պարսպի մզկթին որ'ի տե-
 ղւոջ տաճարին . որոյ կողմանքն տար-
 բերութեամբ ժկ կամ ժկ աստիճա-
 նաց միայն խոտորին յարեելից , որպէս
 տեսանի 'ի կողմացուցէն նկարելոյ 'ի
 գծագրութեանն Տէղհեյայ : Եւ թէ
 և համարեսցուք թէ գծագրութեանս
 կողմացոյց նկարեալէ ըստցուցանե-
 լոյ մագնեստիս քարին ունելով զհիւ-
 սիս , ուստի հարկաւ խոտորեալ ինչ
 է իւիք յարեմուտու կոյս , և թէ այս
 դիրք չէ ամենայնիւ ճիշդ և անվրէպ ,
 այսու ամենայնիւ առաւել ճշգրիտ
 յարեելս գործեալ գտանի մի 'ի կող-
 մանց տաճարին : Ի գիրս Սանտիսայ
 ճանապարհորդի Անդղիացւոյ գտանի
 փոքրիկ յատակագիծ մի Երուսաղէմի .
 որ թէպէտ չունի 'ի մանունս զնոյն

Ճշգրտութիւն գծագրութեանն Տէղ
 հէյայ , սակայն ընդհանրապէս համա-
 ձայն նմին գնայ : Եւ ըստ կողմացոց
 պատկերին նշանակելոյ ՚ի յատակադր-
 ծին Սանտիսայ մէն մի ՚ի կողմանց քա-
 ռակուսւոյ տաճարին ուղղակի հայի
 ՚ի կողմունան նշանագրեալս հիւսիս
 արևմուտք , հարաւ , արևելք : Այլ
 թուի թէ գուցէ համեմատութիւն-
 ինչ հաստատեալ ՚ի կողմանս եբրայ-
 ական տաճարին , որով յաւէտ կանո-
 նաւոր քառակուսի ձև անայր տաճա-
 րըն նախնի քան զաեղի արդի մզկթիս :
 Հաւանեալ են ամենեքեան , զի ըստ
 չափուն որ ՚ի մարդարէութեանն Ե-
 զեկիէլի , մէն մի ՚ի կողմանց տաճարին
 թուին կանգունք հինգ հարիւր : Եւ
 թէպէտ ՚ի բնագրին յեբրայեցւոց փո-
 խանակ կանգնոյ դնի գաւաղան , և ՚ի
 Վուլկադա անուանեալ լատին թար-
 դմանութեան աստուածաշնչին գրի
 Քալանուս , որ է եղեդն , սակայն ակն
 յայտնի է վրիպակն . զի Քալանուս մի
 պարբռնակէր վեց Քառոչ' Դռն . կամ

կանգուն . Այլ և զի յունական թարք
գմանութիւնն արարեալ արդեօք 'ի
հուատարմագոյն բնագրէ՝ յայտնա-
պէս ասէ , Դիմիտրի բենտագուստիս , կան-
գունս հինգհարիւր : Ուապափի Եէհու-
տա հեղինակ Միզնա գրոցն , որ ժո-
զովեաց ղհրէական աւանդութիւնս
'ի վերաց տաճարին , մինչդեռ ոչ շատ
ինչ աւուրք անցեալ էին 'ի կործան-
մանէ նորա , զի կեայր 'ի ժամանակս
Անտոնինոսի Պիոսի , և սա համաձայն
այլոցն գնայ . 'ի մասնաւոր Ճառին ա-
նուանեալ Միտրոն , կամ չափ : Ապա-
անմարթ է յերկրաց լինել յաղագս
չափու տարածութեան տեղւոց տա-
ճարին :

Վիւս ևս զննութիւն է մեղ առ-
նել աստանօր . զի այս չափ ոչ կարէ
լնուլ չափմ զերկայնութիւնն , այլ և
ոչ իսկ զլոյնութիւնն կամ զկարճա-
գոյն չափ գետնոյ մզկթին , թէ և եր-
կար քան զիրաւն համարեացուք զչափ
կանգնոցն նշանակելոց : Բանք Եղեկի-
էլի սափալեն զմեղ զլոյս չափ կանգնոյ

առաւել երկար համարիլ քան կարճ.
 ասացեալ առ Հրեայսն գերեալս 'ի
 բարելոն, (Գլ. Խ. 5. և ԽԳ. 13.) թէ
 'ի շինութեան նորոյ տաճարին և 'ի
 նորոգութեան սեղանոյն պարտին 'ի
 կիր արկանել կանգուն մեծ ուղիւր
 միով կամ թզաւ քան զհասորակ կան
 գունն. Ե'ն Ռի'ի Ռո՛ - Ռի'իօս և՛ բալե-
 տի'. կանգուն մի 'ի կանգնոց և ու-
 զուկ մի : Եազումք յիմաստնոց, ընդ
 որս և Լամի, համարեցան թէ չափ
 կանգնոյն երրայական՝ և կանգունն
 Եդիպոսցւոց անուանեալ Տէրաա'ի-
 ցեն նոյն. և Եդիպոսական կանգնոյն
 գործածութիւն 'ի չափ զեղման գե-
 տոյն 'Նեղոսի' հարկաւ մնայր անփո-
 փոխ յամենայն Ժամանակու, թէպէտ
 և փոխէին հետղնետէ տեարք Եդիպ-
 ոսի : Կրիվէս չափագէտ Անդղիացի,
 և Քըմպըռլընտ կամ Քումպէրլանտ
 եպիսկոպոս Բէդէրպօրուկ քաղաքի
 տեսանեն հնութիւն մեծ յեդիպտա-
 կան կանգունն. զի բաժանմունք ե-
 րեւալք 'ի մեծի բրդանն Եդիպտոսի

սովու չափին անպակաս և անյառել
 ուած լրութեամբ : Եւ այս ինչ հա-
 ւանելի թուի մեզ յոյժ , զի խորացէ-
 լացիք՝ որ 'ի զարմէ միոյ նախահօր ա-
 ճեցեալեղեն ազգ՝ մինչ կային յԵդիպ-
 տոս , և պարապեցին խակ 'ի հասարա-
 կաց գործս աշխարհին , 'ի նոցանէ ա-
 ռին զչափին զոր 'ի գործ ածէին 'ի չափ-
 մունս իւրեանց : Եւ նախ քան զայս
 նահապետք ազգիդ ոչ ինչ շինուածս
 կառուցեալ , և ոչ տեղի հաստատուն
 կալեալ 'ի ժառանգութիւն , ասելի է
 թէ չէին նոցա ինքնուրսյն չափիք մաս-
 նուորք որ պիտեսցին 'ի ճշդիւ բա-
 ժանել զերկիրն . զի այսպիսեաց իրաց
 գիւտ 'ի հարկէ գործածութեանն ե-
 մուտ : Ուվաէս հրահանգեալ յուս-
 մունս եգիպտացւոց՝ 'ի չափական գի-
 տութէ ազգին այնորիկ առնոցը հար-
 կաւ զամենայն կարեորս ուսմանցն զո-
 րըս գիտէրն : Եցէ այս որպէս և է .
 սակայն այս ինչ արտաքայ ամենայն երկ-
 բայութեան է , զի գործածութիւն
 եգիպտական Տէրասին ուսուցանէ

մեղթէ չէ մարթ առաւելես երկոյ-
նութիւն տալ անուանեցելու մի կան-
գուն։ Կախվէս առեալ զչափ Տէրատ-
ին՝ ՚ի վերայ նեղոսաշափին որ ՚ի քա-
ղաքն Եգիպտացւոց՝ համեմատութիւ-
չափէ ընդ անգղիական ոտնաշափիցն։
և զոտնաշափս զայս բաժանելով ՚ի մա-
սունս հազար՝ մի կանգունն լինի հա-
զար ութ հարիւր և ութսուն մասն։
այն է՝ զի պարզագոյնս խօսեսցուք։

1 $\frac{880}{1000}$ սանաշափ անգղիական։ Եւ հա-
մեմատելով զանգղիական սանաշափին
ընդ գաղղիականին՝ ըստ որում անգ-
ղիականն յաւելու քան զգաղղիականն
վեցերորդաւ միովլգծաշափու, որում
որ յառաջ քան զմեզ եկին՝ ոչ քաջ միտ-
եդին, Տէրատն հաւասարի քսան և
կես բթաշափուց ըստ գաղղիական ոտ-
նաշափիցն ճշգութեան։ Երդ հինգ
հարիւր կանգունք բաժանեալ ՚ի վե-
րայ չափու եղիպտական Տէրատային,
առնեն տասն հազար երկու հարիւր
և յիսուն բթաշափս, որ լինի ստնա-

շափք ութե՛ հարիւր յիսուն և չորք .
կտմ հարիւր քառասուն և երկու ձող
և երկու ոտն : Աւստի բարւոք հիմն
ունիմք յասել՝ թէ չափ տաճարին նը-
ւաղ է քան զտարածութիւն գետնոյ
մզկթին . զի այս չափ ոչ հասանէ և
ոչ իսկ ՚ի չափ գետնոյն՝ որոյ նուաղ
է տարածութիւն , այն է՝ չհաւասա-
րի և լայնութեանն : Եւ զի լինէր՝
եթէ ոչ կամէաք չափ զնոյն տալ եր-
րացական կանգնոյն՝ որ ինչ է եզիու-
տական Տէրացային , անձուկ չափ մը-
տածելով ՚ի նմին , ըստ որում կան-
գուն :

Աակոյն և յայս ինչ միտ դնել որ-
ժան է , զի կատար լերինն Սօրիոյի
յարուեստէ ստացաւ զնոյն հարթու-
թիւն գետնոյն՝ որ այժմ տեսանին ՚ի
նմին . և ըստ այսմ մտածութեան դը-
ժուարաւ ոք արդեօք հաւատացէ
եթէ յետինք յաւելին ինչ ՚ի վերայ
աշխատութեան Հրէիցն : Ո ՚ի այս աշ-
խատութիւնք թողեալք երբեմն՝ և
ապա վերստին սկսեալք , տեեցին յյո-

լով հարիւրեակս ամաց . որպէս պատ-
 մէ Յալսեպոս : Եւ ութանկիւնի շի-
 նուած տաճարին Տաճկաց ունելով ձո-
 զաշտփո իբր քառասուն և հինգ՝ ըստ
 կանգնաշտփ գտւողանին որ ՚ի գծա-
 կրութեանն , բալսնգակութիւն ներ-
 քին վայրացն փակելոց ՚ի մզկթին լի-
 նելով քառակուսի ձողաշտփո իբր հա-
 րիւր , չկարծեմք թէ մուհամմէտա-
 կանաց իցէ ինչ պատճառ օրինաւոր
 տարածել տանիլ զարտաքին պարիսպն
 անդր քան զահմանն զրը հրեայք գը-
 րուեցին՝ յոզթակոն գոլով ՚ի վերաց
 ընութեան : Վմենայնիւ իրաւունս ու-
 նիմք ՚ի համարել թէ գետինն որ կը-
 ցորդէ այժմ մզկթին , կատարելապէս
 կցորդ էր և հնոյ տաճարին . և մնա-
 պաշտութիւն մուհամմէտականաց ոչ
 ինչ կամեցաւ ՚ի գետինց տատի կորու-
 սանել , և ոչ իսկ տարածել դժինուա-
 ծըն՝ նոր գետին հայթհայթելով : Առ-
 մի ՚ի բաժանել անդ իւրում զմայու-
 նըս տաճարին՝ որոշետլ և զատու-
 ցետլ զըրտհն հեթանոսաց ՚ի որահէ

Հեքըսյեցւոց, յորում անհամաձայն
 գտանի Վիլլութանտեայ, համարեցաւ
 թէ այս սրահ հեթանոսաց արատքոց
 էր տեղւոյն զոր չափեաց Եղեկիէլ:
 Արդ թուի թէ քննութիւնն զորմէ
 այժմիսկ հանդերձեալէ մեր բուռն
 հարկանել, նպաստէ դրութեանդ. և
 այս վարկած ցուցանէ թէ առ ինչ
 պիտէր գետինն համարեալ աւելորդ:
 Եիկդ ֆօդ ՚ի բանս իւր որ յազագո
 տաճարին, ՚ի մէջ բերէ բանս ՚ի թալ-
 մուտ գրոց իբր յաւելուած եղեալ
 գլխոյն մակագրելոյ Միտութ, յորում
 ասէ թէ չափ լերինն Մօրիա աւելի
 քան զհինդ հարիւր կանգունս էր:
 Այլ որ ինչ յաւելոյր քան զասացեալ
 չափ կանդնոյն՝ չհամարէր սուրբ իւր-
 եւ զոյն տեղի որ պարփակիէր ՚ի չա-
 փուն: Այս հրէական աւանդութիւնն
 երկու ինչ ցուցանէ. մի՛ զի տեղի լե-
 րինն Մօրիա աւելի էր նաև և քանը
 չափն զոր ցուցանէ Եղեկիէլ, զոր և
 մեք ասէտք թէ չափ այժմու տեղւոյն
 թէ է: Երկրորդ՝ զի յաւելուալն ՚ի չա-

փոյ տստի ոչ իմանի պատշաճապէս
 զայլմէ տեղւոյ ,քան զտեղւոյն որ տը-
 ռւաւ կամ թողաւ հեթանոսաց , որ
 'ի յարգելև ՚ի պատել զաստուածն
 խրայէլի գոյին երբեմն 'ի տաճար նո-
 րա , այլ ոչ մտանէին 'ի կարգ ճշմա-
 րիտ երկրպագուաց : Այս ամենայն
 կարի 'ի գեղ գոյ գրեցելումն 'ի մե-
 տասաներորդ գլուխ գրոցն յայտնու-
 թեան , ուրանօր սուրբն Յովհաննէս
 հրաման ընկալեալ Աստուծոյ չափել
 զտաճար նորա , “Տուաւ ինձ եղէ գն
 ո նման գուազանի . և կոյր հրեշտա-
 ռ կըն և ասէր ցիս , արի և չափեա
 ո զտաճարն Աստուծոյ և զտեղանն և
 ո զերկրպագուան որ 'ի նմա՞ : Յա-
 ւելու յետ բանիս . “Եւ զգաւիթն
 ո որ արտաքս տաճարին՝ թող զնա և
 ո մի չափեր . զի տուեալ է զնա հե-
 ռ թանոսաց ”: Այս բան՝ «մի չափեր»,
 ցուցանէ թէ 'ի չափ տաճարին հնար
 եր և պարա իսկ էր ամփոփել և հա-
 մառօտ զհաշիւն ցուցանել քան որ
 չափ էր բովանդակ տարածութիւն

գետնոց տաճարին : Իսկ նախընթաց
 բանն , « և զդաւիթն որ արտաքոյ տա-
 ճարին » , ծանուցանէ թէ էր և ոյլ
 տեղիյաւելեալ ՚ի չտփեալն . և զայն
 ևս թէ առ ի՞նչ սահմանեալ էր տե-
 ղին , « զի տուեալ է զնա հեթանո-
 սաց » : Այս տեղիս գրոց յայտնու-
 թեան կարէ ունիլ իմաստ բացարձակ
 համեմատեալ ծանօթութեանն զոր
 ունէր սուրբն Յովհաննէս յաղագս
 տաճարին Երաւսաղէմի . թէպէտ և ոչ
 զայն ժխտեմք՝ զի խորհուրդ և այլա-
 բանութիւն փակի յայդ ամենայն տ-
 սացուած , զորմէ մեկնչաց է խօսիլ :
 Յովհաննէս , որ եռապատիկ պարիսազս
 ընծայէ տաճարին , յայտնի իսկ տայ
 մեղքուշակել սովաւ երիս տեղիս զա-
 տուցեալս ՚ի միմեանց : Եւ սովաւ է
 իմանալ , զի բաց ՚ի սրահէ հեթանո-
 սացն և ՚ի սրահէ իսրայէլացւոց՝ զո-
 րոց անմարթ է յերկրաց լինել , հար-
 կաւ ընդունիլ պարտէ և երրորդ տե-
 ղի , սրակէս յայտնի լինի այժմ :

| ամի՞՝ որ զՃարտար գիտութիւն

իւր յարուեստ շինուածոց ՚ի դէպ
 պատշաճեաց ՚իստորագրութեան տա-
 ճարին, զհինդ հարիւր կանգնոց չա-
 փըն վերագրելով պարսպի սրտհին իս-
 րոյէլոցւոց, և նոր իմն սրահ ցու-
 ցանելով մեզ ՚ի համեմատութենէ մա-
 սանց տաճարին, բերի այնու ընծայ-
 ել ամբողջ պատկերագրութեան տե-
 ղոյ տաճարին շրջապատ կանգունս
 իբրեւ երկու հազար վեց հարիւր և
 քսան ըստ չոփու եբրայական կան-
 գնոց : Այս չոփ կանգնոց ըստ վերոյ-
 գրեալ համեմատութեանն տան եօթն
 հարիւր քառասուն և վեց ձողաչափու-
 թրդ յու շվեցի մեզ՝ զի երկայնութիւն
 գետնոյ մղկեթին Երուսաղէմի առեալ
 ՚ի գծագրութենէ անտի քաղաքին՝
 հասանէ իբրեւ յերկերիւր և ՚ի հըն-
 դետասան ձողաչափու, իսկ լոյնու-
 թիւնն իբր ՚ի հարիւր եօթանասուն
 և երկու : Իտպմապատկեան զմէն մի ՚ի
 թուոցդ երկուք, և լինի գումարն՝ ձոք
 զոչափու եօթն հարիւր և եօթանա-
 սուն և չորս : Եւ յայսմանէ յիսնէ :

բորդ մի նուազել պարտ է , այսինքն՝
 ձողաչափս հնգետասան կամ վեշտա-
 սան , առ ՚ի պատշաճել զոյս չափ ընդ
 բոլոր չափու շրջապատին Երուսաղե-
 մի : Աւ ըստ այսմ մնան չորեքտասան
 ստնաչափիք՝ տւելի կոմ պակաս , ՚ի հա-
 շիւ շրջապատի գեանոյն՝ որ է կցորդ
 տաճարին : Երդարեւ Լամի դշափ չո-
 րից կողմանցն հաւասար միմեանց գը-
 նէ , հաւասարակողմն համարելով ըզ-
 շինուածն , ուր աեղին ցուցանէ ըզ-
 տարբերութիւն չափու միոյ կողմանն
 ՚ի միւսմէն : Եւ ոչ ոչ գիտէ՝ զի այդ
 ենթադրութիւն Լամեայ ոչ այլ ուս-
 տէք ունել կարէ զհիմն հաստատու-
 թեանն , բայց զի հետեւ թիւն կամ
 կրկնութիւն է այնր չափոյ որ սեպ-
 հականն էր տաճարին զատուցելոյար-
 տաքին որտհէ հեթանոսաց : Աւ զի
 և ոչ մի ինչ՝ ՚ի հանգամանաց արդեանց
 իրացն արդարացուցանէ զասացեալ
 կրկնութիւնդ կամ զհետեւութիւնդ ,
 որ առաւել հաւանելի թուի երեա-
 կայութեան մատաց , քան յարմար դրից

տեղւոյն, վասն սյսորիկ ոչ պարափիմք
ճշգրիտ համարիլ զայս :

Օանուցեալ այսու օրինակաւ ըգ-
չափ տարածութեան տաճարին, ոչ
սակաւ զարմանս ածէ ՚ի մեզ այն, զի
աստցեալքն ՚ի Յովսեպոսէ բնաւին
անհամաձայնք գտանին ճշմարիտ չա-
փուն : Չէ մարթ իմանալ թէ զիարդ
ոյս պատմուգիր, որ յամենայն գէպս
գուն գործէ փառաւոր և մեծ ցու-
ցանել զգաղափար շինուածոյ տաճա-
րին, և իրաւամք, յայսմնուազ յոյժ
տայ զչափ տարածութեանն քան ըգ-
քուն զարդար չափն : Կողմօւնք քա-
ռակուսուոյ տաճարին բաղդատին եր-
կայնութեան տսպարիզի միոյ . և յայ-
սըմթուի սխալեալ, զկէս արամագր-
ծին իբրեւ արամագիծ ամբողջ առնը-
լով : Եւ սյլուր զշրջապատ ողջոյն գեա-
նոյն, ՚ի միասին առեալ և զանտոնեան
աշտարակն որ ՚ի հիւսիսոյ արեմախց
անկեանն կայր պարսպի տաճարին, հա-
մարի ասպարէզս վեց : Կորէր փախա-
նակ գրելս է՛տ, վեց, գրել Տէ՛տ, տա-

ոլն, 'ի կիր առետը զչափ ասպարիզին
որնմա է սեպհական 'ի չափել զշըջա-
պատ Երուսաղեմի . զի տասն ասպա-
րէզը ըստ այնը չափու առնեն եօթն
հարիւր և վաթսուն ձողաչափ . և
այս իսկ է արդարապէս միջինն յամե-
նայն հաշիւս զորս տեսաք :



ԳԼՈՒԽ Ե.

Չո՞ երկայնութեան ըստ Եբրայեց-ի :

Ամեծաւ տաց ճառիս խօսելով
ինչ և զչափուցն զոր 'ի գործ ածէին
Եբրայեցիք 'ի չափմաւնս տեղեաց :
Եւ այս քննութիւնիք այնպէս սերտիւ-
կապակցին ընդ վերոգրելոցդ, զի և 'ի
բազում իրս առացուցանեն զՃշմար-
տութիւն բանիցն : Աչ ինչ երկբայե-
լի երեխ, զի կանգունն ըստ Եբրայե-
ցւոց ասացեալ Աթէն, և գրեալ գրով
քըն ուժիք, դժ, հու . իսկ 'ի բազդեա-

կան լեզուին Ամերե , ըստ յունին ԲԻ-
ԻՒ , յորմէ և արև մտեան կողմունքո-
բիտ , ԲԻՏ . և այլով անուամբ ըստ յու-
նաց ՕԼԵ'ՆԻ , յորմէ լատինն ՈՒՆԻ , այս
կանգուն է չափ ինչ նախնական , զոր
ամենայնիւ հարկէ մեզ ստուգել : Չա-
փը որ ցուցաւ վերագոյնդ ՚ի սակի
տարածութեան գետնոյ տաճարին ,
թուի պատշաճաւոր յոյժ գոլ . և այս
նպաստէ մեզ մեծապէս : Տեսցուք
Եթէ հնար իցէ մեզ զնոյն և այլուր
ճշգրտել . կամ թէ գուցէ այլ եղա-
նակ չափելոյ զերկայնութի կանգնոյն :

Եթէ հաւանեսցուք բանիցն զոր
ասէ Ռասլովի Կօտօլիաս ՚ի վերայ կար-
ծեացն Մայմօնիդեայ , կանգունն եր-
բայական համաչափ գայ կանգնոյն զոր
՚ի գործ ածեն ՚ի Պօլօնիա : Եւ Քըմպը-
լընտ եպիսկոպոս ԲԵԹԵՐԱՊՈՐՈՒկայ ՚ի
համեմատութէ ասաի հետեւցուցա-
նէ թէ՝ մի կանգունն է քսան և մի բը-
թաչափ անգղիական , և եօթնհարիւր
երեսուն և հինգ հազարորդք միոյ բը-
թաչափի , որ է 21 $\frac{735}{1000}$ բըթաչափ որ-

պէս ասէ Առապութնօդ ՚ի ճառն յա-
ղագս կշռոց, դրամոց և չափուց. և
առնէ այս ըստ գաղղիական չափուն
իբր 20 բթաշափ և հինգ գծաշափ ՚ի
վերայ ոտնաշափին Փարիզու. և միով
գծաշափիւ և եթ տարբերի ՚ի Տէրա-
ոյէն կամ յեգիպտական կանգնոյն :

Այլ գոյ միւս ևս ճշդագոյն եղա-
նակ գտանելոյ զչափ կանգնոյն Հրէից.
զոր չիշեմ թէ ոք յորոց յառաջքան
զմեզ աշխատասիրեցին յայս՝ ածեալ
իցէ ՚ի քննութիւն, թէպէտքան զոյլո
առաւելանհակառակելի է. և է այս:
Համաձայնին Հրեայք ՚ի չափել զճա-
նապարհ շաբաթուն՝ կամ զչափ ճա-
նապարհին զոր օրէն էր նոցա ընթա-
նալ յաւուրս շաբաթուց, առեալ ՚ի
պատուիրանէ տասն և վեցերորդ գրւ-
խոյ Ելից գրոցն, համար 30. « Այս ոք
» ելանիցէ ՚ի տեղւոջէ իւրմէ յաւու-
» րըն եօթներորդի » : Եւ համաձայ-
նին ասելթէ այս ճանապարհ ձգի մին-
չե յերկուս հազար կանգունս : Հե-
ղինակ քաղդէական մեկնաբանութեն

յոյտնաբանէ զայս ՚ի բացատրել իւ-
 րում զվեցերորդ տուն առաջին գլխոյ
 գրոցն Հռութայ : Օ այս չափ հաստա-
 տէ և Եկումենիոս վկայութեամբ Արո-
 դինեայ . զի ասացեալ թէ մղանն հա-
 ւասար էր Ճանապարհին շաբաթուց,
 յաւելու թէ պարունակէ Տէ՛ֆէ՛ռ
 Բէ՛թօն . կանգունք երկու հազար : Ճա-
 ռըն յաղակս չափուց Հրէից՝ շարա-
 գրեալ ՚ի սրբոյն Եպիփանէ , որ ՚ի հը-
 րէութեան ծնեալ ՚ի Պաղեստին՝ հար-
 կաւ քաջ գիտէր զիրսդ զրոց բանքս
 են , ուսուցանէ մեզ թէ շաբաթու-
 Ճանապարհն է վեց ասպարէզ : Եւ
 կանգնոյն կամեցեալ յաւէտ քան նը-
 ւազ տարածութիւն տալ՝ լաւագոյն
 է աստանօր զսովորական ասպարէզն
 իմանալ , ըստ որոյ ութ ասպարէզք
 տունեն մի մղոն հռովմէական . և թուի
 իսկ թէ ՚ի յետին ժամանակս այս չափ
 ասպարիզի առաւել ՚ի գործածութե-
 նղեւ քան զայլան : Չափ այսր ասպա-
 րիզի սահմանեալ յիննսուն և չորս
 ձողաչտփու և յերկուս ոանաշափս և

յութ բթաչափս , այս թիւ բազմաւ
 պատկեալ վեցիւ՝ ասյ ձողաչափս հինդ
 հարիւր և եօթանասուն , և չորս ուռ
 նաչափս : Եւ զոյս գումար բթաչա-
 փուց բաժանեալ յերկուս հաղար մու-
 սունս՝ մէն մի ՚ի մասանց աստի լինի
 20 $\frac{2}{3}$ բթաչափ : Երդ՝ հաշուոյս ար-
 տագրութիւն թուի յատկապէս յայս
 արարեալ զի սառւգեսցէ զմերս որ ՚ի
 վեր անդր գուշակութիւն յաղագս
 չափուս : Երդ զինչ տակաս իցէ , զի
 հաշիւն զոր ցուցաք վերագոյնդ , չիցէ
 ճշդիւնոյն ընդ այնմ զոր յառաջագոյն
 տացաք յաղագս երացական կանգ-
 նոյն . համարեալ զնա նոյն լինել ընդ
 Տերացին կամ ընդ եգիպտական կան-
 գնոյն : Տարբերութիւն գծաչափի միոյ
 և յիսներորդի միոյ ոչ տպաքէն յայս-
 պիսի համեմատութիւնո առ ոչինչէ
 համարելի : Յո՞ղ զի տարբերութիւնն
 ՚ի սակի ամբողջ պարագրելոյն չասա-
 նէ ՚ի մասն մի յերկերիւր մասանց , առ
 ՚ի զոյս տարբերութիւն մեծ ինչ վս-
 բիսկակ ՚ի ճիշդ չափմանն համարելոյ

հարկ եր ստուգիւ գիտել թէ վեց
ասպարեզը տունեն ամբողջ երկու հա-
զար կանգունս, ոչ ինչ իւիք առաւել
կամ նուազ, Այսկայն անսպատեհ է մեզ
դնել և որբոյն Եպիփանու, որ ՚ի բո-
լորական հաշուին զվեց ասպարեզն ետ
փոխանակ երկու հազար կանգնոց, ան-
տես արարեալ զյաւելուած երեսնե-
րորդի չորրորդի մասին միոյ ասպարե-
զի, որ տոնե սանաչափո վեշտասան
կոմ եօթնուտան :

Երբայեցիք ունին չափմի տեղւոյ,
որում բաց յանուանեն Պէրաթ՝ զոր
մելիքը յատուկ անուն համարին ոյ-
սը չափու, կոչեն նա և միլ, և գրեն
դրովքն միմ, եօդ, լամեպ. որոյ բազմու-
ւորակականն լինի միլն : Եւ թէ ողէտ
չեարեմք յերկրայս լինել զի այս ա-
նուն ՚ի Հոռմայեցւոց բարբառոյ անց
առ նոսա, սակայն ոչ ինչ կասեցուցա-
նէ այս զմեղ յասելոյ թէ առ Հրեայս
միլն չունի որոշ ստհման ինքնուրոյն,
որ հաշուիցի ըստ չափու երկու հա-
զար կանգնոց . և յոյս վերածի բան

Եկումենիոսի զոր վերագոյնդ յիշեց
 ցոք : Ի յոլով տեղիս գրոցն Ճեմորայ՝
 զորս 'ի մէջ առնու Ռէլան ('ի Պաղես-
 տինն , Հայ . Ա . Թ. Պ. . 400 .) ուստիմքը
 զի Հրեացք զմիլն համարեն եօթն և
 կէս ասպարէզ : Եւ ասպարէզն կոչե-
 տու նոսա ոիչ . (գրովքն ոէս , եօֆ , յա-
 մէտ .) և 'ի բազմուորականն ոիչին :
 Վկոս Ճելիոս ('ի գիրս Աստիկեան
 գիշերք , Հայ . Ա . Գ. Լ . 1 .) զասպարէ-
 զըն անուանէ լատիներէն Քուուուի ժո-
 ւած , որ է տեղի արշաւելց : Զորք
 միլք ըստ Եբրայեցւոց 'ի մի հաշ-
 ուեալք՝ կոչին յեբրայական լեզուին
 Բէրյէհ . (գրովքն Բէ , ոէս , յամէխ , հէ ,
 ըստ մեզ՝ փարսախ .) յԱսորի լեզուին
 Բարձան նշանակէ տարածել , և Բարձան
 տարածութիւն : Եւ այնշափ հաւա-
 նելի է ասել թէ այս բառ յԱսորւոց
 լեզուէն էանց յեբրայականն , զի յա-
 ւէտ ընտանեցաւ բառդ առ Եբրայե-
 ցիս առ Ժամանակօք բաբելոնկան գե-
 րութեանն : Ուէլան 'ի վերոյիշեալ
 գիրսն (Թ. Պ. . 397 .) աճէ 'ի մէջ բան

մի ՚ի թաղմուտ գրոց , ուր յայտնի
բանիւ եքրայական մին սահմանի յեր-
կու հաղար կանգունս , և փարսախն՝
չորբ միլք , կամ ութ հաղար կան-
գուն : Երկու հաղար կանգունք հաշ-
ուեալք ըստ Ճիշդ չափու Տէրասցից՝
առնեն հինգ հարիւր վաթսուն և ինն
ձողաչափ , երկու ոտնաչափ և ութ
բթաչափ : Եւ զայս գումար բաղմա-
պատկեալչորիւք , մի փարսախն լինի
երկու հաղար երկերիւր եօթանա-
սուն և եօթն ձողաչափ , չորբ ոանա-
չափ և ութ բթաչափ : Այս չափ գը-
րեթէ ոչ իւիք տարբերի ՚ի գաղղիա-
կան փարսախնէն՝ զօր նոքա անուանեն
Լիեօ , որ է երկու Վիեօ նախնի Գաղ-
ղիացւոց . և մի աստիճան աշխարհա-
գրական ըստ այսմ չափու հաշուի ճրշ-
դիւ քսան և հինգ Լիեօ :

Իմաստունն Ռէլան համարելովթէ
մին եքրայական չիցէ ինչ աւելի կամ
պակաս քան զհռովմայական մզոնն , և
զերկուս հաղար թիւս կանգնոց որ ՚ի
միումն , հաւասար չափեալ հինգ հա-

զար ունաչափից 'ի միւսումն, զմի կան-
 գունն համարի երկու ոտնաչափս և
 կես: Յմէ պէտ ոչ ինչ հակառակիմք թէ,
 համաշխարհական ծաւալումն հուլ-
 մէական պետութեան աշխարհածա-
 նօթ արտը և զմղոն նոցտ, սակայն
 սասցդ է և այս՝ զի չափ այսր մղոնի
 չկարէ շփոթիլ ընդ չափու եբրայա-
 կան մղոնին զոր ունիմք: Դժուարին
 է ընդունիլ զչափ կանգնոյն զարդա-
 րեալն 'ի կասկածելի հաշուց անափ,
 որ ըստ որում կանգուն՝ առաւելու-
 քան զերեւոյթ ճշմարտի. Հիմն կա-
 լեալ զրկ համեմատութիւն թուոց
 առանց այլ ինչ հաստատուն հիման,
 զի այս հակառակ կայ ճշգրիտ սահ-
 մանի և սասցդ փորձոյ: Դճէ մարտ գիր-
 ուն՝ միօրեայ ճանապարհ մարդոց հաշ-
 ուի ուրեք փարսախս տասն. և եթէ
 մի փարսախն իցէ չորս մղոն՝ միօրեայ
 ճանապարհն լինի քառասուն մղոն հը-
 ռովմէական: Այլ նախնիք 'ի հաշեւս
 իւրեանց ոչ երբէք հասին ցոյցդ վոյր:
 Առվորաբար զմիօրեայ ճանապարհն ա-

սեն քսան և հինգ մլոն, կամ երկեւ
 րիւր ասպարէզ: Եւ եթէ Երոդոսոս
 (՚ի պատճ. Գիլ Ե.) ասէ երկերիւր և
 յիսուն ասպարէզս, գիտել արժանէ՝
 զի պատմիչդ այդ տասն ասպարէզ
 հաշուէ առ մլոն, որպէս տեսանի յա-
 մենայն իսկ ՚ի գիրս նորա: Եւ արեւե-
 լեայ աշխարհագիրք իսկ համաձայնին
 ընդ արև մտեայս, քսան և հինգ մլ-
 զոնս տալ միոյ աւուր Ճանապարհի:
 և Մառօնիք որ թարգմանեցին ղաշ-
 խարհագրութիւնն իտրիսի մատենա-
 գրի արաբացւոյ որպէս մեքս ունիմք,
 կամ Ճշդագոյնս ասել համառօտեցին,
 նշանակեն զայս ՚ի յառաջաբանութէ-
 իւրեանց: Եւ յետոյ արեւելեայք սկլ-
 սան այլ և այլ չափս տալ միօրեայ Ճա-
 նապարհի. ոմանց ասելով մլոնս երե-
 սուն փոխան քսան և հնդից. բայց
 այսր պատճառ է մլոնիցն տարբե-
 րութիւն. զի ոչ միշտ զմլոնն հաշուեն
 ըստ չափու արաբացի մլոնից, ըստ
 որոյ քսան և հինգ մլոնք հաշուեալք՝
 կարեն ըստ ոյլում առաւել կարճա-

գոյն մղոնի հաշուիլ երեսուն մղոնս .
 և ըստ յատուկի չափու փարսախին՝ տառ
 որն փարսախիք գոլով փոխանակ երե-
 սուն մղոնից չուոմայեցւոց , յայտ է
 թէ այսպիսի չափ մեծ զանցանէ քան
 զսահմանն՝ զորմէ են բանք մեր : | ա-
 մի հակառակէ Վիլլալբատեայ ասե-
 լով թէ՝ բարձրութիւն սեղանի խրն-
 կոց յայտնապէս գրեալ գոլով լինել
 կանգունս երկու , հարկ էր հասակի
 քահանացին որ առ սեղանոյն պաշտէք
 և արկանէր խունկս՝ լինել անճոռնի
 մեծութեամբ : Օսյս ընդդէմ խօսի .
 զի Վիլլալբանտօ համարէր թէ մի կան-
 գունն երբայտկան իցէ երկու ստնա-
 չափ և կէս : Անժիստելի է՝ զի համե-
 մատութիւնքն գտեալք նկատմամբ
 բուն խոկ տեղւոյ տաճարին , ոչ եր-
 բէք դան ըստ պատշաճի , եթէ կան-
 գնոյն երբայեցւոց չափ տացի աւելի
 քան չորիր մասամբ մեծ քան զչափին
 վերագոյնեղ նշանակեալ : Ոտնաչափին
 հուովմէական հաշուի հազար երեք
 հարիւր և վեց ($130 \frac{6}{10}$) տասնորդա-

կանս գծի միոյ ըստ փարիզեան ոտնաշ
չափին, երկու և կէս ոտնաշափիք առ-
նեն երեք հարիւր քսան և վեց գիծ
և կէս. կամ քսան և եօթն բթաշափ
և երկու գծաշափ և կէս: Դիտելի լի-
ցի և այս . զի Ակիլալբանտո զհռով
մշական ոտնաշափն դպղն ինչ մեծ հա-
մարէր քան զոր մեքս հաշուեցաք աս-
տանօր :

Դիպուածով միոյն է համեմատու-
թիւն փարստիսին երբայեցւոց ընդ-
էիթօ գաղղիացւոց, և ես զայդ հա-
մեմատութիւն վերագոյնդ վասն այ-
նորիկ միոյն եղի՝ զի մերով ծանօթ և
ընտել չափու ծանուցից զչոփ փար-
ստիսին երբայեցւոց: Վշնոյնովէս դիսկ-
ուածոյ գործ համարեսցի նա՛ և հա-
մեմատութիւն փարստիսին, և այլոյ
իմիք հնոյ չափու արեելեայց. այլ ար-
ժան է զայս համեմատութիւն առ-
նուլ ճշդիւ 'ի փորձ և ստուգել զմի-
մեանս, գիտելով թէ երկու ոյս չափք
մի են ընդ միմեանս: Յուցիւալաքէն
'ի ճառի իմում որ յաղագս չափուց

Ճանապարհորդութեան, թէ ասպա-
 րէզն, որ է $\frac{1}{10}$ մղոն հռովմէական ճըշ-
 գըրտիւ համեմատ գոյ չափու վտա-
 ւանացն քսենոփոնի. և ըստ հաշուին
 զոր առնէ քսենոփոն՝ երեսուն ասպա-
 րէզք առնեն փարսանդ մի: Այս չափ
 կարի համեմատ գոյ և որոց գրեցինն
 Երոդոսոս, Եսիւքիոս, Սուխտաս: Եւ
 երեսնիւ բազմապատկեալ զեօթանա-
 սուն և հինգ ձողաչափ, զերիս ոտ-
 նաչափ և զըորս բթաչափ, յոր սահ-
 մանի ասպարէզն տասներորդ միոյ մը-
 զոնի, գտանեմք երկու հազար երկե-
 րիւր վաթսուն և վեց ձողս, և չորս
 ոտնաչափ: Երդ այս հաշիւ փարսան-
 դի մետասան ձողաչափ փարսախի,
 այնպէս զի յաւելեալ՚ի վերայ երկուս
 ոտնաչափ և երկուս բթաչափ՝ յաս-
 ոյարէզ անդր որ է փարսանդին, հա-
 շիւն ճշդիւ նոյնանայ աննուազ և ան-
 յաւելուած: Եթէ կամիցի ոք ընտ-
 րել զհաշիւն որ՚ի համեմատութենէն
 զոր սուրբն Եսլիփան առնէ, զհրէա-
 կան մղոնն կամ զըտքաթու ճանա-

պարհն համարեալ վեց ասպարէզ ըստ
 սովորեալ չափուն , ոյն է՝ հինգ հա-
 րիւր վաթսուն և վեց ձողաչափս և
 չորս ոտնաչափս , և զայս չափ բազմա-
 պատկիցէ չորիւք առ ՚ի գիտել զջըշ-
 պրիտ չափ փարսախին , գոցէ երկու
 հազար երկու հարիւր վաթսուն և վեց
 ձող՝ և չորս ոտն . որ է Ճիշդ չափ ե-
 րեանից ասպարիզաց մերոց : Եւ ո՞չ
 հետեւցուացէ յայսմ ամենայնէ՝ թէ
 փարսախն եթրայտկան ո՞չ այլ ինչ է՝
 բայց եթէ նոյն իսկ փարսանգն Պար-
 սից կամ Բաբելոնցոց , որպէս և կտմք
 իցեն ումեք անուանել զայս : Ո՞չ ա-
 պաքէն փարսախն յինքեան փակէ ըդ-
 բազագրութիւն երեսնից ասպարի-
 զաց . զի զմզոնն եթրայտկան՝ որ չոր-
 րորդ մասն է փարսախին՝ Հրեայք հա-
 մարին եօթն ասպարէզ և կէս : Յա-
 ւել և զայն , զի անուանքդ փարսախ
 և փարսանգ բաւական մօտ են իրե-
 րոց , և ցուցանեն զմբեկ և զնոյն չափ :
 Եւ զի բառքդ փարա և փարսախ գը-
 տանեն ՚ի հին աքեւելեան լեզուին ՚ի

քաղդէականն՝ որ և ասորերէն՝ նշանակութիւն ճիշդ և սեպհական, քանզօր չէ մարթ գտանել բառ նշանական առաւել համեմատ իրին նշանակելոյ, սովաւ առանց իրիք երկբայ ութեան ունիլ համարիմք և զնշանակութիւն բառին փարսանդ։ Եւ զի ոչ ուրեք գոյ յիշատակ փարսախի ՚ի սուրբ Գիրս, իրաւունս ունիմք կարծել թէ գործածութիւն չափուս մուծաւ առ Եբրայեցիս ՚ի ժամանակի գերութեան նոցա ՚ի բարելոն։

Այլ դու տե՛ս ինձ քանի՞ աղխաղը խութիւնիք են պատշաճից աստանօր ։ Ունի և փարսանդն զիւր սահման ամենենին որոշեալ տարատրոհեալ յայնըմ սահմանէ՝ որ զփարսախն բացուրոշէ։ Օի փարսանդին չափ հիմնի յայլինչ աղդ ասպարիզի, որ հաշուի այնպիսեաւ իմն եղանակաւ՝ որ գրեթէ ամենենին օտար է ՚ի հաշուոյ նորին փարսանդին, և ոչ իւիք կցորդութիւն ունի ընդ նմա, և զայս կարեքաջ իմանալ որ պատրաստ ՚ի ձեռին

ունի զՃառ մեր որ յաղագս չափուց
 ճանապարհորդութեան : Իսկ փար-
 սախին նախնական չափք ամենայնիւ
 արբերեալք են յայսմանէ . և աստա-
 նօր ծագի յայնմանէ՝ զի կանգունն ե-
 դիպաական համարի չափ հին յցժ .
 և հաւանելի թուի թէ զսորայս կի-
 րառութիւն ընկալոն յինքեանս Ճեք-
 րայեցիք : Ի վերայ վարկածոցս , զի ինձ
 թուի ասացելոցս ոչ ինչ աւելի քան
 զվարկած գոլ , յարմարութիւն կան-
 գնոյս այսորիկ ընդ փարսախին այն-
 պէս ձիշդ և անվրէպ գտանի , զի և
 այսչափ ձշութիւն յիրիդ յայդմիկ
 անմարթէր յուսալ : Այն ձշութիւն
 է և յայնմ զոր արժան իցէ մակաբե-
 րէլ յաղագս չափուն զոր չորրորդ մա-
 սըն փարսախի ասէ սուրբն Եպիփան :
 Այս ամենայն ճանապարհք տարբերք
 ՚ի միմեանց , և որք ամենե ին չունին
 հայեցումն առ իրեարս , ամենեքեան
 ՚ի նոյն ածեն հետեւութիւն , ամենե-
 ցուն մի են ելք : Եւ զի՞նչ աստի : Եւ-
 թէ օրէն իցէ ասել այսպէս , իրերաց

Երաշխաւորք գոն սոքա ամենեքեան .
և որ ինչ չափ և հանգամանք չափուց
մտանեն 'ի բաղադրութիւնն՝ ամե-
նայն 'ի հաստատութիւն միմեանց են :

Ո՞վ յօդտից այսր զննութեանէ ըս-
տոյգ տեղեկութիւն եբրայական կան-
գնոյն : Արդարեւ Լամի և այլք ոմանք
յիմաստնոց առաջի արարին զՏէրաա
Եդիպոսցւոց իբրեւ չափ յայտարար
կանգնոյս , այլ զսեպհական նոյնութին
ոչ ցուցին և ոչ ստուգեցին այնպիսի
հաւաստեօք որպիսիս մեքս բացատրե-
ցաք : Եւ այնպէս իսկ թուի մեզ՝ զի
ամենակատար ճշգութեան չտփուս
ոչ ինչ խելամտեաց Լամի . զի թէպէտ
զեգիսլատական Տէրաայէն մակաբեր-
եաց նոյն ընդ եբրայական կանգնոյն
լինել , տակայն զկանգունն եբրայական
ասէ քսան բթաչափ . (Գիրք . Ա . 9 .
Յօդ . 1.) զի ասէ . « մեք զկանգունն եբ-
րայեցւոց ասեմք քսան բթաչափ » :

Կանգունն եբրայեցւոց չափէր
բիլս վեց . և բիլն յերբրայական բար-
բառ անուանի Դօֆաի , գըովքն Ռէտ ,

ֆէ, իէլ: Եօթանասնիցն թարդմանու-
 թիւն փոխանակ բառիդ դնէ բալէս-
 զի, որ է ուղուկ, որ է անուն չափուն
 զորմէ խօսիմք. և Հեսիւքիոս և Յու-
 լիոս Պօլուքս զքիլն սահմանեն լինել
 չորս մատնաչափ: Ապա ուրեմն մի կան-
 գունն եբրայական լինի քսան և չորս
 մատնաչափ. և յայսչափ իսկ մասունս
 բաժանեալ է Տէրաս եգիպտացւոց
 'ի վերայ Միքեասին, որ է չափ աճ-
 մանն Կեղոսի առ Ֆօսդադայ կամ 'ի
 հինն Եգիպտոս: Վիրխէր առեալ Ա-
 պուլ ֆէտայէ ասէ թէ կանգուն Հը-
 րէից օրինական, որ և Եգիպտական՝
 ունի մատնաչափս քսան և չորս: Եւ
 Դիոդորոս Սիկիլիացի յառաջին գիրսն
 'ի խօսելիւրում զչափոյ աճմանն Կե-
 ղոսի՝ որ շինեալն էր 'ի Մեմփիս, զոր
 և անուանէ Կիլօսքօքոս, Կեղոսադէտ,
 յիշատակ առնէ ոչ կանգնոց միայն
 յորս բաժանէրն, այլ և զմատնաչա-
 փիցն բառիւդ Տաքդիլուս, որ նշա-
 նակէ զմատունսն, որ էին այլես մա-
 նըր բաժանմունք կանգնոյն:

Նետեռւթեամբ չափուն որ սեպ
 հականէ կանգնոյս, Դօքախն կամ ու
 ղուկն լինի երեք բթաչափ և հինգ գը-
 ծաչափ ըստ հաշուի ոտնաչափին մեռ
 լոյ: Եւ տեսանեմ զի այս մասնաւոր
 չափ զայս ունի իւր յատուկ առան-
 ձին, զի անդստին ՚ի բնութենէ տ-
 ռեռլ թուի: Ո՞ի հայեցեալ ՚ի հա-
 մեմատութեան չափու չորից մատանց
 ձեռին մարդոյ փակելոյ, որպէս մեկ-
 նէ մեզ Պօլլուքս, ուսումն համեմա-
 տութեան մասանց մարդկային մար-
 մոյ կարէ ցուցանել թէ այս չափ
 պատշաճ գայ արձանի՝ որ իցէ հինգ
 ոտնաչափ և ութ բթաչափ ըստ գաղ-
 ղիական չափու: Եւ այս բարձրու-
 թիւն հասակի, որ ըստ յունական չա-
 փուց առնէ վեց ոտնաչափ անթերի,
 զանցանէ յաւէտքան զավորական հա-
 սակ մարդոյ, և ոչ շփոթեալ նոյնա-
 նայ ընդ նմին: Այլ եթէ ուղուկն
 որ է վեցերորդ մասն երրայական կան-
 գնոյն, այդպէս պատշաճի գեղեցիկ և
 բարձր հասակի, զոր չէ մարթ սովոր

բական հասակ համարիլ, այլ հասակ
 հսկայից, այսու հետե ի՞ զի չափ կան-
 գնոյս ըստ որում կանգուն՝ չկարէ հա-
 զորդ լինել նոցին պատշաճութեանց:
 | ամի որոշ չափ տուեալ եքրայական
 կանգնոյն զքսան մասնաչափն կամ ըզ
 բթաչափն՝ աստի հետեւցուցանէ ըզ
 բարձրութիւն հասակի նահապետաց
 'ի քսան և չորս բթաչափս, կամ 'ի վեց
 ոտնաչափ և յութ բթաչափ. և այս
 համեմատ գոյ կանոնին զոր աւանդէ
 Վիդրուվիոս. « ոտն բարձրութեան
 մարմնոց վեցերորդի, և կանգունք
 չորք »: Ծառ այսմ համեմատութեան
 չափն առեալ 'ի Տէրասյէն տայ եօթն
 ոտնաչափ, երկուք բթաչափուք պա-
 կաս. եթէ ընդունելի ինչ իցէ այս
 չափ բարձրութեան հասակի, մասնա-
 ւոր ինչ տարբերութիւն դնելով սե-
 ռի նախնի մարդկանն այլազգ ՚ի բնա-
 կանէն զոր առ մեօք տեսանեմք, միշտ
 տեսանի հաստատութեամբ, զի չափ
 կանգնոյն զորմէ բանքս են՝ զանցանէ
 զհամեմատութեամբ սահմանի հա-

սակին ծանուցելոյ առ մարդիկ ՚ի բազ
 մաց հետէ : Այնպէս զի համեմատու
 թեամբ բարձրութեան հասակին յոր
 չափ ուղին վերածիլ թուի մասնաւու
 րապէս , կամ հինգ ոտնաչափք և իբր
 ութ բթաչափքն , կանգունն համեւ
 մատեալ սմին հասանէ միոյն յեօթն-
 պւտասն բթաչափս : Արդ հաւանեալ
 թուի ընդ հանրապէս առ Հրէիցն վար-
 դապեաս , թէ հասարակ կանգունն
 տարբերէր յօրինական կանգնոյն՝ որ
 և չափ սրբութեան , զի գաղափար նո-
 րա սղահէր ՚ի սրբութիւնս տաճարին .
 և տարբերութիւն հասարակ կանգ-
 նոյն ՚ի միւսմէն էր՝ զի ուղկաւ միով
 պակաս էր ՚ի նմաննէ : Աւստի ամփո-
 փեալ ՚ի հինգ Դիյոնիս , (զի այս է
 յոգնակի Դօյակ բառին ,) կամ ՚ի քը-
 սան մասնաչափս , և պակտսեալ ըլ-
 չափ երից բթաչափից և հինգ գծից ,
 երկայնութիւն նորա լինի եօթնու-
 տասն բթաչափ և մի գիծ : Եւ թէ-
 պէտ Լամի հակառակի կարծեաց վար-
 դապետացն Հրէից ՚ի սակի հասարակ

կանգնոյն Եքրայեցւոց, սակայն սլատ
 շաճութիւնն մեծ ՚ի համեմատութե
 երկուց այդոցիկ կարէ ՚ի հաստատու-
 թիւն լինել Հրէից։ Ո՞իւս ևս հաս-
 տատութիւն գտանէ բան վարդապե-
 տաց Հրէից ՚ի վկայութեան Յովսե-
 պոսի, որ ՚ի համեմատութիւն ընդ մի-
 մեանս ածէ զկանգունն սովորեալ ՚ի
 գործածութեան առ Եքրայեցիս՝ և
 զատափիկեան կանգունն։ Օ ի այս կան-
 գուն առեալ ՚ի բնական համեմատու-
 թենէ իւրմէ զոր ունի ընդ հելլեն
 սանաչափին, որ հաշուի 1360 մասն
 կամ ասսներորդ գծի ըստ փարիզեան
 սանաչափաւն, վերածի յերկուս հա-
 ղորս և ՚ի քառասուն մասունս ըստ
 նոյն չափաւ, կամ յերկերիւր և ՚ի չորս
 գծաչափաւ, որ առնեն բթաչափաւ եօ-
 թըն և տասն։ Յուշլիցի մեզ և զոր
 ինչ ասացաք վերադոյնդ ՚ի վերայ բա-
 նիցն Եղեկիելի, ՚ի խօսիլ զչափայ տա-
 ձարին։ զի սլատուիրէ Հրէիցն որ ՚ի
 բարիլոն՝ ՚ի նորոգութեան տաճարին
 ՚ի կիր առնուլ կանգուն ուղկաւ մեծ

քան զսովորականն : Այս ուղուկ ոչ
 այլ ինչ է , բայց քիլն անուանեալ , ըստ
 Եթոյեցւոց անուանեալ Դօֆոփ . և
 ոչ ապաքէն յայտնի է այս չափ տարա-
 բերութեան կանգնոյն երկուց , որոց
 փոքրն ընկալեալ էր 'ի գործածութիւ-
 նը միաբանեալ մեր թէ առժամա-
 նակօք երկրորդի տաճարին փոքր կան-
 գունն էր ընկալեալ 'ի գործածութիւ-
 մարթ էր առ խղճի մի զանցանելոյ-
 զաստուածաղիր օրինօքն՝ որ պատուի-
 րէ մի և եթ ունիլ չափ և կշիռ և ոչ
 երկուս՝ ուրանալ զգործածութիւն-
 փոքր կանգնոյն 'ի ժամանակս որ յա-
 ռաջ քան զառաջին կործանումն տա-
 ճարին : Այսկայն և առ այս չունիմք
 մեզ ապաւէն զբացարձակ լութիւն-
 սուրբ Գրոց զայսմ կանգնոյ . զի 'ի գի-
 րըս երկրորդ Օրինաց չափ մահճաց
 Ովկայ թագաւորին Բասանու դնի
 ըստ բնական համեմատութեան մար-
 դոյ . կանգնով առն , կամ ըստ Վուլ-
 կադայ թարգմանութեան լատինաց-
 ւոց՝ կանգնով ձեռին մարդոյ : (Բայ-

մեզ՝ սկսոյից կանգնով . Բ . Օթ . Գ . 11 :)
 Եւ թէպէտ անորոշ անուանք չափուց
 որք իւրաքանչիւր առանձինն ունին
 սկզբունս բնուկանս՝ որպիսիք են ան-
 ուանեալքն առ ՚ի մէնջ ոտնաչափք ,
 զի մի՛ այլ ևս օրինակս յաճախելով եր-
 կարեսցուք զըանս , ըստ բաւականին
 արդարացուցանեն զանուն կանգնոյն
 տուեալ և չափուց մեծագունից , որ-
 պիսիք են եգիպտական և եբրայական
 կանգունքն . սակայն խորհրդածու-
 թիւն այսց սկզբանց յոլով անգամ կա-
 րեոր լինի ՚ի քննութեան չափուց . և
 ոչ երբէք արժան է անտեսութեամբ
 զանց զնոքօք աւնել : Այլաւ գտի ըլ-
 չափ բնական ոտին , զորյ չափոյն և
 զգործածութենէն խօսեցեալ է իմ
 ընդարձակապէս ՚ի ճառին որ յաղագս
 չափուց ճանապարհորդութեան :

Կալա ունիմք մեք յայսմ գրութեան
 վերլուծաբար զննութիւն եբրայական
 չափուց . որ թէպէտ առ ոչ ինչ վե-
 րածի ՚ի մասնաւորս , սակայն կարի
 յարմարապէս պատշաճի չափու շըր-

ջապատին Երուսաղեմի և տեղւոյ տաճարին, ըստ որում այս չափ արտադրեցայլ և այլ նշանակաց առելոց ՚ի գըրոց նախնեաց, և համեմատելոց ընդարդի չափու տեղւոյն։ Եւ ամենայն ինչ որ տարբերք առ ՚ի միմեանց համարեալք են, և հաւաքաբար եղան այսր, այնպէս սերտ կապակցութիւն ունիլ թուին ընդ միմեանս, զի են որպէս թէ աղխեալք ընդ միմեանս։ և ՚ի հաստատութիւն միմեանց են յամենայնի որ հայիցի ՚ի նոսա,



Ճ Ա Ռ

Յաղագ կանգնոյ Արաբացւոյ։

Ա ԵՐԱԳՈՅՆԻ ՚ի բանս ուրեք որ յաղագս չափուց տաճարին, խոստացաք ՚ի քնին առնուլ և զկանգունն արաբացւոց յետ չափուցն եբրայեցւոց։ Ես կանգուն կոչեցեալ առ նոսա.

Տերտառ կամ Տէրա՝ (և ըստ հնչման
 թուրքաց՝ Զիրա,) յերիս տեսակս բա-
 ժանի, որը են հին, հասարակ, և սեաւ:
 Առաջինն այդպէս անուանեալ, զի
 կարծի ՚ի գործածութեան գոլ ան-
 դրստին ՚ի ժամանակաց տէրութեանն
 Պարսից, բաղկանաց յերեսուն և եր-
 կուց մատնաշափից: Երկրորդն ՚ի քը-
 սան և շորից ըստ սովորական և բնա-
 կան սահմանին. իսկ երրորդն զմիջինն
 ունելով երկուց ծայրիցդ՝ համարիքը-
 սան և եօթն մատնաշափի: Որոշի ա-
 ռաջինն յաւելմամբ երկուց ևս ուղ-
 կաց ՚ի վերայ վեցից այլոց ուղկացն,
 որ են չափք պարունակեալք յերկրոր-
 դում տեսակի անդ. որպէս զնոյն ու-
 նին և եգիպտական և եբրայական
 կանգունքն: Այս սահմանք քաղին ՚ի
 հաւաքածոյ գրոց արևելեաց ուրումն
 ըսրաչափի, զոր ՚ի լոյս ընծայեաց կօ-
 վոս ՚ի ծանօթութիւնս իւր՝ որովք
 պարզաբանեաց զգիրս Սկզբանց ասու-
 ղաբաշխութեան՝ զոր ըսրագրեաց
 ելքէրդան:

թուի թէ յերից տեսակաց աստի
 կանգնոց զայն յաւէտ արժան իցէ ՚ի
 քնին առնուլ՝ որ հասարակացն ան-
 ուանի, և է երկրորդն . մանաւանդ
 զի ընդարձակ իսկէ այդր գործածու-
 թիւն, և մեծապէս համեմատի կան-
 գնոյ ընկալելոյ առ այլազինս ընդհան-
 րապէս : Եւ առ ՚ի հասատատել զափ
 կանգնոյն կարեոր այն ինչէ ըստ իմայ
 բանիս, զոր հետեւեցուցին ՚ի մանր
 չափմանէ երկըի որ գործեցաւ հրա-
 մանաւ Ելմամուն խալիֆէին ՚ի դաշ-
 տին Սինճարայ ՚ի Միջագետս : Օսցա
 չափ չկարէին այլազգ անուանել, ե-
 թէ ոչ հասարակաց կամ սովորական:
 Եւ որպէս պատմէ Ապուլֆէտա ՚ի վե-
 րայ չափուն Ելմամունայ՝ աստիճան մի
 ՚ի վերայ հասարակածին հաշուեցաւ
 յիսուն և վեց մղոն արաբացի, և երկու-
 երրորդք : Եւ Ելֆէրդան յութերորդ
 գլուխն ասէ թէ՝ յոյսմ չափու մի մը-
 ղոնն է չորս հազար կանգուն : Օմի
 աստիճանն առեալ բոլորական հաշ-
 ուառվ ՚ի չափ յիսուն և եօթն հազար

ձողաչափից, զորոյ զպտտձառն լիով
հատուցեալ համարիմք ՚ի մեր բան
սըն որ յաղագս չափու տաճարին, մը
զոնն արաբացի բովանդակի իբր ՚ի հա-
ղար վեց։ Հաղար ձողաչափիք ցուցա-
նեն զկանգունն լինելու թուտասն բը-
թաչափ, և եթէ ՚ի հաշիւ կամիցի ոք
տոնուլ զյաւելուած վեց ձողաչափի-
ցըն, գտցէ ՚ի յաւելուածոյ աստի գը-
ծաչափ մի և երիս տասներորդս գը-
ծաչափի։ որ են գծաչափիք $1 \frac{5}{10}$ ։

Կօլիոս այր իմաստուն՝ համարե-
ցաւ թէ զսեաւ կանգնոյն իցեն բան
բըն ՚ի վէպս չափուցն Ելմամունայ,
հիմնեալ յայս՝ զի Ելփէրգան որոշել
կամելով զսեպհական կանգուն չափոյդ
այդորիկ՝ անուանէ կանգուն արքայ-
ական։ Այլ արժանէ միտքանիլ յայս՝
զի զայդ կանգուն հաստատեաց Ել-
մամուն։ և այնպէս կոչեցաւ՝ զի ա-
ռաւ ՚ի թիկանց ձեռին կամ ՚ի բնա-
կան ուղիէ եթավալպացւոյ ուրումն ծաւ-
ռայի Ելմանունայ։ և գտաւ զի չափն
առեալ ՚ի սմանէ մեծ էր բան զոր

յայլոցն։ Այլ թող զայն՝ զի լորաչո-
 փըն յիշեալ՝ ի Կօլիոսէ՝ զաեաւ կան-
 գուն սեպհական ասէ՝ ի չափել զմե-
 ծաղին կերպասս ՚ի վաճառս Պաղտա-
 տու, համեմատութիւնն հաստատեալ
 ՚ի մէջ երկուց այլ և այլ կանգնոցդ
 արաբացւոց մեծ անտեղութիւն յա-
 րուցանէ՝ ՚ի մէջ, եթէ զկանգուն սեաւ
 համարեսցուք առետլ՝ ի չափել զեր-
 կիր առ Ելմամունաւ։ ՚Ի խոեան նախ,
 զի սեաւ կանգունն երիւք մատնաչո-
 փօք առաւելեալքան զկանգունն հա-
 սարակ՝ եթէ ութ և տասն բթաչափ
 և եթ լինէր, ոչ շատ ինչ առաւելեալ
 առելի եր քան զկանգունն հասարակ։
 Երկրորդ՝ զի հասարակ կանգունն, որ
 պարտ եր երկու բթաչափ պակաս լի-
 նել, նուազէր։ յայտնի գոլով մեզ այլ
 ուստեք, զի կանգունն ՚ի գործածու-
 թեան առ Եբրայեցիս թէպէտ փոքր
 եր քան զօրինական կանգունն նոցա,
 սակայն համարի գոնէ ունիլ տարա-
 ծութի եօթն և տասն բթաչափուց։
 Երրորդ՝ զի հին կանգունն որ անուանի

հաշեմեան, համեմատաբար չկարէ ա-
 ռաւելուլքանց զքսան և մի բթաջափ
 և քանի մի գծաջափս, թէպէտ և ի-
 ցեն մեղ պտտճառք մէծ ևս համա-
 րելոյ զայդ կանդուն քան զասացեալ
 չոփիդ: Օ ի ըստ Մարտէ ֆիտեայ՝ բար-
 ձրութիւն տաճարի սրբոյն Սովիայ որ
 'ի յատակէ մինչև ցգմբէթն, է 78 կան-
 գուն ըստ հաշեմեան հաշուին. իսկ
 Եւագրիոս թուէ զբարձրութին զայն
 հարիւր և ութոսուն ոտնաջափս ըստ
 հելլեն չափուն: Եւ 'ի համեմատու-
 թենէ հելլեն ոտնաջափին ընդ մերու-
 մըս՝ կանդունն անուանեալ աստա-
 նօր ՚ի չափ բարձրութեանն հասանէ
 'ի քսան և վեց բթաջափս և 'ի գիծու-
 թը երկու: Եւ ոչ իսկ ոյս բաւա-
 կան է՝ եթէ 'ի համեմատութիւն ած-
 ցուք զկանդունս ընդ գողափարին
 զօր տայ մեղ նոյն Մարիւֆիտ. զօր և
 Եղուարդ Պէռնար ասէ նշանակեալ
 'ի գրչագիր մատենի ուրեք մատենա-
 դարանի Օքսֆրուտ քաղաքի. և հա-
 շուէ քան և ութ բթաջափս, և ինն

գծաչափ ըստ հաշուի անդղիական ուռ
նաչափից , որ եթէ ոչ միտ գիցուք
դուզնաբեայ տարբերութեանց , հա-
ւասար գայ մերումն քսան և եօթն
բթաչափի ըստ փարփղեան ոտնաչա-
փին : Չափ երկայնութեան և լայնու-
թեան տաճարի սրբուհւոյն Սովիխոյ՝
զոր տայ մեղ Մարիւ ֆիտ , են այսոքիկ .
հարիւր և մի կանգուն 'ի միոջէ կող-
մանէ , և իննասուն և երեք կանգունք
և կես 'ի միւսմէն , և սոքօք մեծ երեխ
կանգունն՝ եթէ համեմատեսցուք ընդ-
չափուն զոր աւանդէ Կւրլո . այն է՝
ձողաչափք քառասուն և երկու՝ և ե-
րեսուն և ութ : Եւ զի բաղդատու-
թիւնն չմարթի լինել անթերի , ար-
տադրեալն յերկարութենէ անտի է
իբր երեսուն բթաչափ 'ի կանգունն ,
և 'ի լայնութենէն քսան և ինն բթա-
չափք և երեք գծաչափք քաջ հաշ-
ուեալ :

Գիտեմ զի մարթէ ումեք կործել
իրաւունս ունիլ 'ի սկզբել թէ՝ որ և
է չափ հին կամ հաշմեան կանգնոյն :

ունիցի ինչ համեմատութիւն ընդ այ-
 լոց ազգաց կանգնոցն, կամ ազդիցէ ի-
 ւիք 'ի վերայ չափու նոցա . և թէ սա
 հասուցանիցէ զչափ հաստրակ կանգ-
 նոյն 'ի քսան բթաչափս և յերիս գի-
 ծըս, ընկալեալ նա՛ և զգաղափար չա-
 փու հաշեմեան կանգնոյն . զի բացե-
 րեակի համեմատութիւն սոցա առ
 միմեանս է որպէս չորից առ երիս :
 Այլ այս պատճառ չէ բաւական 'ի ցը-
 րել և 'ի ստել կամ յանպիտանութիւն
 հատանել զվերլուծութիւն կանգնոյն
 առելոյ 'ի ճշգրիտ չափմանէ աստիճա-
 նաց երկրի որ յաւուրս էլմամունայ .
 թէ և այս չափ ոչ թուեսցի ումեք
 ունել զամենակատարն ճշգութիւն ,
 սակայն միշտ բնապէս է կարծել թէ
 չիք ինչ համեմատութիւն ընդ մէջ եր-
 կուց տեսակաց կանգնոցդ արաբա-
 ցւոց , որ առաւել յատկապէս պատ-
 շաճիցի վերլուծութեան կանգնոյս ,
 բայց եթէ կանգունն հաստրակ : Եւ
 սեաւ կանգունն այնու իսկ անպատ-
 շաճ է առ այս , զի հաշուեալ ըստ

չափու հաշէմեան կանգնոյն հարկէ էը
սմա հասանել ՚ի քսան և երկու բթա-
չափս և յինն գծաչափս :

Թէ վընօ, որոյ ճշդութեանն և ճար-
տարութեանն առաւել քան զայլ ա-
մենայն ճանապարհորդս՝ վկոյեն ամե-
նեքին, գտեալ յաշխարհագրութեան
իմիք յօրինելոյ ՚ի պարսիկ բարբառ ,
թէ մատնաչափն որ է չորրորդ մասն
միոյ ուղիի և քսաներորդ չորրորդ մա-
սըն միոյ կանգնոյ , չափիցի վեց գա-
րեհատիւք եղելովք առ ընթեր մի-
մեանց , և այս չափ հասարակաց է առ
ամենայն մատենագիրս արևելեաց ,
ասէ դտանել զի չափ վեց գարեհա-
տից բաղմապատկեալ ութիւք՝ լինի
վեց բթաչափ լստ մերոց ոտնաչռ-
փուց . յորմէ հետեւեցուցանէ թէ կան-
գունն բաղադրեալ ՚ի հորիւր քառա-
սուն և չորս գարեհատից՝ լինի ստնա-
չափ մի և կէս . (տե՛ս յերկրորդ ճա-
նապարհորդութեանն . Գլ. Է :) Երդ
աչապաքէն այս իսկ է որ հետեւի ոչ մի-
այն ՚ի չափէ աստիճանի երկրին որ չու-

փեցաւ յաւուրս Ելմամունայ , այլ և
 'ի մասնաւոր համեմատութենէ հա-
 սարակ կանգնոյ ընդ այսմ : Եւ տե-
 սանի , զի սեաւ կանգունն համեմա-
 տեալ ընդ հասարակ կանգնոյն չոփե-
 լոյ ըստ վերոյ եղեալ վերլուծութեղ ,
 լինի քսան բթաշափ , և չորս կամ հինգ
 գծաշափ : Եւ այս՝ զի հարեանցի ա-
 սացուք , կարի ՚ի դեպ գոյ եբրայա-
 կան և եգիպտական կանգնոցն : Արդ՝
 այս կանգուն այնու յուելոյր քան ըզ
 հասարակն , զի թէկն ձեռին եթով-
 պացւոյն , կամուզուկն առեալ ՚ի տա-
 րը չափուն մեծ էր քան զսովորակա-
 նըն , և ոչ զի նուազել ինչ կամեցան
 'ի սահմանէ կանգնոյն , որում պարո-
 էր լինել ուզուկս վեց : Ոչ արդեօք
 յումնկտոս մեծանայ բնական համե-
 մատութիւնն հասեալ ՚ի քսան բթա-
 շափ և ՚ի կէս , ուր վեց ուզուկք ըստ
 չափման հելլենացւոց , թէ և ունին
 'ի տարր զհասակ մարդոյ հնգոտնա-
 շափ և ութ բթաշափ , որպէս ՚ի վեր
 անդը տսացաք , հասանեն յեօթն և

՚ի տասն բթաշափա : Եթէ այս պատշաճութիւնք և հաւանական դրութիւնք չունիցին տեղի ՚ի բաղդատելմեր զհին կամ զհաշէմեան կանգունն ընդ այլ ազգս կանգնոց , ասեմք թէ հաւանելիէ թէ այս բաղդատութիւնը թուոյն իցէ ուղկոցն և մատնաշափից , առանց միտ դնելոյ բուն երկարութեանցն : Ո՞չ արդեօք այսպիսի տարբերութիւնք և յուանաշափա տեսանին , թէպէտ և ամենայն ոտնաշտփ հաշուի երկոտասան բթաշտփ : Եւ զի օրինակ մի գտցուք առ այս՝ առանց արտաքոյ ելանելոյ առաջադիր բանիս , աւասիկ կանդունն սեաւ թէպէտ առաւելուքան զհասարակն երիւք մատնաշափուք ըստ չափուք քանի և չորից մատանց հասարակ կանգնոյն , այլ ոչ առաւելքան զուղուիս վեց հաշուին ՚ի բաղդրութիւն կանգնոյդ :

Այս ձառ յաղագս չափուց և կանգնոց արաբացւոց ըստ մասնաւորիմն կողման հայի ՚ի գլուաւոր նպատակ ձառիս . այլ կամաւ երկարեցի

և զոր ՚ի վերայ այսօր զբան , զ իտեղով
 զի՞նչ ուրուք խօսեցեալ է ցացսօր ՚ի
 գետ քննութեամբ ՚ի վերաց սօրա :
 Ան առ քմայ մա մեծաւը նորդ մեջ զին
 ՀԵ գիւմաւ : Համ քմայ սարու յա զին
 ՏՐԵ առաւ բրազ սաւ ՀԵ Ն կիւմաւ առ
 տեսան և մրափեա նոյ մի ան տայ
 ով մ առ պայման ունի զմառաւ , պայման
 կախուաւ զամբաս Է || և մրաման առաւ
 ան արացուանաւ և զամբաս առաջաւաւ
 կաշաւան մասմաս և ունի նի , մինաւ
 այլ : Ժայռան վեհանդակ է առ առ
 զմառաւ այս առ պայման ով խամելոր ով
 անդաս զամբաս ուն զամբաս և զամբաս
 և ունի նի . առան մա ու զմայ գիւմաւ
 զման զամբաս միտապատճեց մաս առ առ
 զմայ և մասոց ամբայ մաս և ամբայ
 յուն , մամ զմայ խամելու զամբաս
 միտապատճեց ով ով այս մաս զամբաս
 : Համ քմայ մ այն առաջաւաւ է
 և շամին սպայաւ . առան ով ? ||
 զամբասն առ պայման պայման , զամբաս
 պայման պայման և մ պայման պայման մու
 ճամապատճեց առ պայման պայման

1724
Vetus testis quod dicitur quod non est nisi
in primis. Et quod dicitur quod non est nisi
in primis. Et quod dicitur quod non est nisi

in primis.

